

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՊՈԼԻՏԵԽՆԻԿ)  
ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ



ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ (ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ) ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱՊԱՆ 2012

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղը(մինչև 2002թ. նոյեմբերը՝ կրթահամալիր) կազմավորվել է ՀՊՃՀ գիտական խորհրդի 1996թ. հոկտեմբերի 2-ի թիվ 42 որոշման հիման վրա տրված ռեկտորի հոկտեմբերի 3-ի թիվ 321 հրամանով՝ 1984թ. ԵրՊԻ-ի հեռակա ուսուցման ֆակուլտետին կից ստեղծված Կապանի ուսումնախորհրդատվական կետի(ՈՒԽԿ) հիմքի վրա:

ՀՊՃՀ Կապանի ՈՒԽԿ-ն, որը գործում էր Կապանի գիշերօթիկ դպրոցի(թիվ 27) տարածքում, 1996/97 ուստարում ուներ 13 դասախոսական հաստիք, 14 հիմնական դասախոս, 2 մասնագիտությամբ սովորող 125 ուսանող, որոնք հիմնարար կրթություն ստանալուց հետո 3-րդ կուրսից ուսումնառությունը շարունակում էին Երևանյան Կրթահամալիրի համապատասխան դեպարտամենտներում:

Մասնաճյուղը տեղաբաշխվեց իր կազմում ընդգրկված նախկին Կապանի ճարտարագիտատնտեսագիտական քոլեջի մասնաշենքերում (մասնաճյուղի կազմից քոլեջը առանձնացվեց 2001թ. օգոստոսին):

2002թ. նոյեմբերին ՀՊՃՀ Կապանի կրթահամալիրը վերակազմակերպեց <<ՀՊՃՀ ՊՈԱԿ>> Կապանի մասնաճյուղի:

Մասնաճյուղի կազմում գործում են երկու՝ ընդհանուր ճարտարագիտական կրթության և մասնագիտական ճարտարագիտական կրթության ֆակուլտետներ, հեռակա ուսուցմամբ բաժանմունք, 5 ամբիոն, Երևանի կրթահամալիրի 1ամբիոնի մասնաճյուղ:

Մասնաճյուղի կառավարման մարմիններն են մասնաճյուղի Գիտական խորհուրդը, Տնօրինությունը: մասնաճյուղում գործում են ուսանողական ինքնակառավարման մարմինը՝ ուսանողական խորհուրդը, աշխատողների արհմիութենական կազմակերպությունը և կուրատորների խորհուրդը:

Մասնաճյուղն իրականացնում է միջին մասնագիտական և ճարտարագիտության բակալավրի կրթական ծրագրեր՝ 5 մասնագիտությունների գծով: Մասնաճյուղում այսօր ճարտարագիտության բակալավրի կրթական ծրագրով սովորում են 416 ուսանող(314 վճարովի): Մասնաճյուղում դասավանդում են 15աստիճանակիր դասախոս՝ 3-ը գիտությունների դոկտոր, 12-ը գիտությունների թեկնածու(որից 9-ը դոցենտներ), 1ավագ դասախոս, 2 ասիստենտ, 29 դասախոս: Մասնաճյուղում գործում են գրադարանը, հասարակական սննդի օբյեկտը և բուժկետը:

Ավարտվել է մասնաճյուղի ուսումնավարչական(գլխավոր) մասնաշենքի հիմնանորոգումը: Առաջիկայում նախատեսվում են մյուս մասնաշենքերի նորոգման աշխատանքները:

Լեռնամետալուրգիական մասնագիտությունների ուսանողների արտադրական պրակտիկան և լաբորատոր պարապմունքների մի մասը բարձր արդյունավետությամբ իրականացվում է Սյունիքի մարզում գտնվող <<ԶՊՄԿ>>, 'ԴԳՄՔ', 'ԱՊՄԿ' ՓԲ ընկերություններում:

Արագորեն զարգանում է մասնաճյուղի ինֆորմացիոն ենթակառուցվածքը, որը ներառում է ժամանակակից 55 քոմպյուտեր: Դրանց զգալի մասը օպտիկամանրաթելային կապով միացված են ինտերնետին: Մասնաճյուղում գործում

են տեխնոլոգիական կարողությամբ լսարաններ, որոնք հագեցվում են ինֆորմացիայի արտապատկերման ժամանակակից միջոցներով:

Մասնաճյուղը պայմանագրային գիտահետազոտական նախագիծ է իրականացնում «ՁՊՄԿ» ՓԲԸ-ի հետ: Մասնաճյուղում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների արդյունքները հրապարակված են միջազգային և հանրապետական գիտական հանդեսներում, դասախոսներն ու ասպիրանտները պարբերաբար հանդես են գալիս գիտաժողովներում: Մասնաճյուղը 1997թ.-ից ներգրավվել է ՀՊՃՀ կողմից «Տեմպուս-Տասիս» միջազգային նախագծերում, որոնց շրջանակներում ստեղծվել են արդյունաբերության հետ փոխկապակցության և կարիերայի ծառայությունների տարածաշրջանային մասնաճյուղ-կառույցներ: 1997թ.-ից մասնաճյուղում գործող քոմփյուտերային թրեյնինգային կենտրոնում գործում են քոմփյուտերային վերապատրաստման դասընթացներ տարածաշրջանի բնակչության համար:

Որակավորման բարձրացման մշտական գործող դասընթացներում ներգրավված են Զանգեզուրի և Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատների ճարտարագիտատեխնիկական անձնակազմը և բանվոր-օպերատորները:

Մասնաճյուղն իր գործունեության ընթացքում տվել է 1151 շրջանավարտ, ովքեր զգալի ավանդ են ներդրել Սյունիքի արդյունաբերության զարգացման, ճարտարագիտական և գիտատեխնիկական ներուժի ձևավորման գործում: Շրջանավարտները ընդգրկվում են «ԵրՊԻ-ՀՊՃՀ շրջանավարտների ասոցիացիա» հ/կ-ի Կապանի մասնաճյուղում՝ իրենց նպաստը բերելով հարազատ բուհի զարգացմանը:

Մասնաճյուղն ակտիվորեն մասնակցում է ՀՊՃՀ-ի նախաձեռնությամբ հանրապետությունում ընթացող կրթության բարեփոխումների գործընթացին՝ ներդնելով կրեդիտների կուտակման և փոխանցման Եվրոպական ECTS համակարգը՝ Բոլոնիայի գործընթացի զարգացումներին համահունչ:

ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի ինքնավերլուծությունն իրականացնող  
աշխատանքային խմբի կազմը

Աշխատանքային խմբի  
համակարգող  
Աշխատանքային խմբի  
ղեկավար  
Անդամներ

Լեռնիկ Պետրոսյան, ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի տնօրենի  
պաշտոնակատար  
Նունե Իսակյան, ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի կրթության  
որակի ապահովման և վերահսկման բաժնի վարիչ  
Արթուր Սարգսյան, ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի ՈԻՄԱ  
գծով տնօրենի տեղակալ  
Սեյրան Բալասանյան, ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի  
գիտական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ  
Արմեն Հարությունյան, ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի  
տնտեսական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ  
Անուշ Քարամյան, ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի գլխավոր  
հաշվապահ  
Անիկ Եղիազարյան, ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի ՄՃԿ  
ֆակուլտետի դեկան  
Վաչագան Եփրեմյան, ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի ԸՃԿ  
ֆակուլտետի դեկան  
Անահիտ Այվազյան, ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի ՀՈԻԲ-ի  
վարիչի պաշտոնակատար  
Արամ Գրիգորյան, ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի կրթության  
որակի ապահովման և վերահսկման բաժնի ավագ տեսուչ  
Մարի Ղազարյան, ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի <<ՕՀՀ և  
Մ>> մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի,  
ուսխորհուրդի նախագահի տեղակալ

## ՉԱՓԱՆԻՇ-1 ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Մասնագիտական ուսումնական հաստատության(այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.Ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱԾ-ին:**

ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղը հանդիսանում է «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ)» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածաշրջանային կառուցվածքային ստորաբաժանում, որն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով, ՀՊՃՀ և իր կանոնադրություններով:

Մասնաճյուղի ներկայիս կանոնադրությունը (հավելված 1.1.), որը հաստատված է ՀՊՃՀ գիտական խորհրդի 2009թ. սեպտեմբերի 25-ի նիստի թիվ 4/3 որոշմամբ, պայմանավորված արդի զարգացումներով, առաջարկվող փոփոխություններով և լրացումներով (հավանության է արժանացել մասնաճյուղի գիտխորհրդի 2012թ. հունիսի 24-ի նիստում /արձանագրություն թիվ 23/) ներկայացված է ՀՊՃՀ գիտխորհրդի հաստատմանը (հավելված 1.2.):

ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղն իրականացնում է միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական (բակալավրիատ) կրթական ծրագրեր: Մասնաճյուղը նպատակադրված է ապահովել իրականացվող կրթական ծրագրերի համապատասխանությունը ՀՀ կառավարության կողմից հաստատված որակավորումների ազգային շրջանակի համապատասխան մակարդակների բնութագրիչներին:

Մասնաճյուղի գործունեության արդյունավետության գնահատման հիմնական ծրագրային փաստաթուղթը ռազմավարական ծրագիրն է, որն առաջին անգամ մշակվել է 2007թ.-ին (հավելված 1.3.)՝ հիմնված ՀՊՃՀ 2006-2010թթ. ստրատեգիական պլանի վրա, որը ձևավորվել էր 2005/06 ուստարում Եվրամիության TEMPUS-TACIS նախագծի շրջանակներում:

Ներկայումս մասնաճյուղն առաջնորդվում է 2012թ.-ին մշակված իր թվով երկրորդ՝ 2012-2016թթ. ռազմավարական ծրագրով (հավելված 1.4.), որը հաստատված է ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի մասնաճյուղի գիտխորհրդի 2012թ. մայիսի 24-ի նիստում (արձանագրություն թիվ 22) և ՀՊՃՀ գիտխորհրդի 2012թ. սեպտեմբերի 27-ի նիստի թիվ 09 որոշմամբ: Այն իրենից ներկայացնում է մասնաճյուղի զարգացման գործընթացի պլանավորումը 2012-2016թթ. համար՝ նախորդի ստրատեգիական պլանի կատարման արդյունքների վերլուծության, արտաքին ու ներքին գործոնների ուսումնասիրման հիման վրա և նոր հնարավորությունների ու մարտահրավերների, SWOT վերլուծության և առաջադրված զարգացման ռազմավարական հիմնական թիրախների հաշվառմամբ:

Ռազմավարական ծրագրում հստակ արձանագրված է Կապանի մասնաճյուղի առաքելությունը.

ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) Կապանի մասնաճյուղը հանդիսանում է ճարտարագիտական բարձրագույն կրթության կենտրոն ՀՀ Սյունիքի մարզում, որի հիմնական առաքելությունն է .

- կրթական և գիտական ծառայությունների մատուցում՝ Սյունիքի մարզի տնտեսությունը բարձրորակ մասնագետներով ապահովելու , հասարակության կրթական և տեխնոլոգիական պահանջները բավարարելու նպատակով ,
- մարզի երիտասարդության մասնագիտական կողմնորոշմանը, ուսանողների մասնագիտական ունակությունների ձեռքբերմանը, մասնագետների վերապատրաստմանը և կատարելագործմանը, անհատի համակողմանի զարգացմանը, ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակմանը նպաստելը,
- մարզի գիտական ներուժի հզորացմանը, արդյունաբերական և այլ ճյուղերի զարգացմանը նպաստելը:

Նշված առաքելության իրականացման համար առաջադրված են մասնաճյուղի գործունեության բոլոր բնագավառներն արտացոլող 8 նպատակներ, դրանց իրականացման համար անհրաժեշտ ուղիները և վերջիններիս լուծման ռազմավարական քայլերը, ինչպես նաև յուրաքանչյուր նպատակի իրականացման առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանաիշները:

Ստորև ներկայացված են վերոհիշյալ 8 նպատակները, յուրաքանչյուր նպատակի խնդիրները և առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանաիշները.

**ՆՊԱՏԱԿ 1. ԱՊԱՀՈՎԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄՈՒՏՔԻ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ, ԲԱՎԱՐԱՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՍՑՆԵԼ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ:**

**ԽՆԴԻՐ 1.1.** Համապատասխանեցնել մասնաճյուղի ընդունելության կառուցվածքը և չափաքանակներն աշխատաշուկայի և կրթաշուկայի պահանջներին:

**ԽՆԴԻՐ 1.2.** Ակտիվացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները:

**ԽՆԴԻՐ 1.3.** Զարգացնել լրացուցիչ և շարունակական կրթության համակարգը:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանաիշներ(հինգ փարվա կտրվածքով)

- Բացառապես աշխատուժի շուկայի և կրթության շուկայի պահանջմունքներով պայմանավորված ընդունելության պլանավորում (մասնագիտությունների անվանացանկ և չափաքանակներ):
- Հիմնական, լրացուցիչ և շարունակական կրթության ծրագրերով ընդունելության ծավալը 2016թ.-ին՝ առնվազն 200, այդ թվում.
  - Բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցում- առնվազն 100,
  - Բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցում- առնվազն 60,
  - 9-ամյա հանրակրթական դպրոցի հենքի վրա միջին մասնագիտական կրթական ծրագրով- առնվազն 20.
  - լրացուցիչ և շարունակական կրթության ծրագրով- առնվազն 20:
- Մասնաճյուղի կազմում գործող ավագ դպրոցի ստեղծում՝ 2013թ.-ին:
- Տարածաշրջանի ավագ դպրոցներում գործող հենակետային դասարան՝ 1-2:

- Հիմնական, լրացուցիչ և շարունակական կրթության ծրագրերով ուսանողական համակազմը 2016թ.-ին՝ առնվազն 700, այդ թվում.
  - Բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցում- առնվազն 400,
  - Բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցում- առնվազն 200,
  - 9-ամյա հանրակրթական դպրոցի հենքի վրա միջին մասնագիտական կրթական ծրագրով- առնվազն 80,
  - լրացուցիչ և շարունակական կրթության ծրագրով- առնվազն 20:

ՆՊԱՏԱԿ 2. ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ:

ԽՆԴԻՐ 2.1. Ներհամալսարանական համակարգի շրջանակներում ներդնել ուսուցման որակի գնահատման և ապահովման ներմասնաճյուղային համակարգ՝ բարձրագույն կրթության որակի ներքին արժևորման եվրոպական ENQA չափանիշների պահանջներին համապատասխան:

ԽՆԴԻՐ 2.2. Ապահովել արդի միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համահունչ ՀՊՃՀ-ում մշակվող նոր ծրագրերի ներդրումը մասնաճյուղում:

ԽՆԴԻՐ 2.3. Մասնաճյուղում ապահովել կրեդիտային համակարգի ընդլայնված կիրառությունը:

ԽՆԴԻՐ 2.4. Ստեղծել անհրաժեշտ պայմաններ և մեխանիզմներ՝ ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար:

ԽՆԴԻՐ 2.5. Նախապատրաստվել ՄԿՈԱԱԿ-ի կողմից մասնաճյուղի կրթական ծրագրերի արտաքին փորձաքննական գնահատման և հավատարմագրման փուլային գործընթացին:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով)

- Մասնաճյուղում ուսուցման որակի գնահատման և ապահովման գործող ներքին համակարգ՝ համահունչ եվրոպական արժևորման չափանիշների պահանջներին – 2012թ.:
- Մասնաճյուղում իրականացվող բակալավրական կրթական ծրագրերի վերլուծության և որակի ամենամյա գնահատման պրակտիկայի արմատավորում՝ սկսած 2012/13 ուստարվանից:
- Առաջարկվող մասնագիտությունների վերանայված ցանկ՝ համապատասխանեցված աշխատաշուկայի առկա պահանջներին՝ 2013/2014 ուստարի:
- Շուկայի պահանջմունքներով ձևավորված նոր մասնագիտություններ և մասնագիտացումներ՝ առնվազն 1-հնգամյա կտրվածքով:
- Փուլային անցում կրթական ծրագրերի մշակման և ներկայացման նոր՝ բանիմացության ձևավորմանն ուղղված եվրոպական կառուցվածքի՝ սկսած 2012/2013 ուստարվանից:
- Մասնաճյուղի շրջանավարտներից և կրթական ծրագրերից գործափունների բավարարվածության պարբերական ուսումնասիրություններ՝ սկսած 2012/2013 ուստարվանից՝ առնվազն 2 անգամ յուրաքանչյուր մասնագիտության համար (հնգամյա կտրվածքով):

- Վերանայված և մեթոդական ու կազմակերպական առումներով կարարելագործված կրեդիտային համակարգ. ներդրման ավարտը՝ 2012/13 ուստարի:
- Մասնաճյուղի դասախոսական կազմի մանկավարժական գործունեության ամենամյա գնահատման գործող ներքին համակարգ՝ սկսած 2012/2013 ուստարվանից:
- Ուսումնառությունից մասնաճյուղի ուսանողների բավարարվածության ամենամյա պարտադիր գնահատման համակարգ՝ սկսած 2012/2013 ուստարվանից:
- Մասնաճյուղի գործունեության և կրթական ծրագրերի ինքնավերլուծություն՝ ըստ ՄԿՈԱԱԿ-ի սահմանած որակի ապահովման և հավատարմագրման չափանիշների՝ 2012-2013 թթ.:
- Մասնաճյուղի կրթական ծրագրերի (մասնագիտությունների) պետական հավատարմագրում. գործընթացի ավարտը՝ 2015թ.:

ՆՊԱՏԱԿ 3. ԱՊԱՀՈՎԵԼ ԱՐԴԻ ԿՐԹԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԲԱՎԱՐԱՐՈՂ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՊՏԻՄԱԼ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԿԱՐԳ:

ԽՆԴԻՐ 3.1. Շարունակել բարելավել և համալրել դասախոսական կազմը՝ արդի կրթական պահանջներին համապատասխան:

ԽՆԴԻՐ 3.2. Ապահովել հաստիքների օպտիմալ օգտագործում և վարչակազմի շարունակական համալրում ու որակական առաջընթաց:

ԽՆԴԻՐ 3.3. Բարձրացնել մասնաճյուղի կառավարման համակարգի արդյունավետությունն ու որակը:

ԽՆԴԻՐ 3.4. Զարգացնել ուսանողական ինքնավարությունը, ընդլայնել ուսանողների մասնակցությունը մասնաճյուղի կառավարմանը:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով)

- Հիմնական դասախոսական կազմում գիտական աստիճաններ ունեցող դասախոսների հաշվեկշիռը՝ առնվազն 50%:
- Դասախոսական կազմի գնահատման ռեյթինգային համակարգի առկայություն:
- Դասախոսական տարակարգերի համար աշխատավարձերի տարբերակված սանդղակներ:
- ՀՀ պաշտոնական միջին աշխատավարձի 150%-ը կազմող դասախոսական կազմի միջին աշխատավարձ-2016թ.
- Դասախոսական կազմի միջին տարիքի նվազեցում՝ 2016 թվին 2011թ.-ի համեմատ առնվազն 10%-ով:
- Ուսանող/դասախոս քանակական հարաբերակցությունը՝ 12:1:
- Ուսանող/աշխատող քանակական հարաբերակցությունը՝ առնվազն 6:1:
- Տվյալների բազաների առկայություն մասնաճյուղի գործունեության բոլոր հիմնական բնագավառների համար:
- Կառավարման իրավական-նորմատիվային փաստաթղթային բազա:
- ՀՊՃՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) համակարգի առկայություն մասնաճյուղում:
- Տարեկան հաշվետվության նոր ձևաթերթ՝ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) հիման վրա:



ՆՊԱՏԱԿ 4. ՁԵՎԱՎՈՐԵԼ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ, ԱՊԱՀՈՎԵԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ ԵՎ ԻՆՖՐԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՏՇԱՃ ՄԱԿԱՐԴԱԿ:

ԽՆԴԻՐ 4.1. Մասնաճյուղում բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները:

ԽՆԴԻՐ 4.2. Զարգացնել և արդիականացնել մասնաճյուղի ուսումնագիտական լաբորատոր բազան:

ԽՆԴԻՐ 4.3. Բարձրացնել աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը, բազմազան դարձնել սոցիալական ծրագրերը, զարգացնել սոցիալական ինֆրակառուցվածքը:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով)

- Նյութատեխնիկական բազայի համապատասխանություն պետական կրթական չափորոշիչների պահանջներին:
- Մասնաճյուղի նյութատեխնիկական բազայի արդիականացման ու զարգացման հեռանկարային և տարեկան պլանների առկայություն և կատարողական:
- Մեկ ուսանողին ընկնող օգտակար մակերեսը՝ ոչ պակաս նորմատիվով սահմանված 8 ք.մ:
- Օգտակար ուսումնական մակերեսների աճը հնգամյակի կտրվածքով՝ 5%:
- Մասնաշենքերի ընթացիկ նորոգման և հիմնանորոգման ծախսերի հաշվեկշիռը մասնաճյուղի բյուջեում՝ առնվազն 5%:
- Ուսումնագիտական լաբորատոր բազայի զարգացման տարեկան հատկացումների հաշվեկշիռը մասնաճյուղի բյուջեում՝ 4 %:
- Սոցիալական ծրագրերին հատկացումների տոկոսը մասնաճյուղի արտաբյուջեում առնվազն 2%:
- Ուսումնական մասնաշենքերի և ճաշարանի հարակից տարածքների բավարար լուսավորվածության առկայություն:
- Ճաշարանի ավարտված հիմնանորոգում և գույքով հագեցում:
- Հանրակացարանի մասնաշենքի, մարզադահլիճի և հարակից մարզահրապարակի հիմնանորոգման գործընթաց:
- Գրադարանային նոր ռեսուրսների ձեռք բերման տարեկան հատկացումների տոկոսը մասնաճյուղի արտաբյուջեում՝ 1%:

ՆՊԱՏԱԿ 5. ԱՊԱՀՈՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԵՎԱՎՈՐԵԼ ՕՊՏԻՄԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ:

ԽՆԴԻՐ 5.1. Ներդաշնակեցնել ֆինանսական պլանավորումը մասնաճյուղի ռազմավարական նպատակներին և խնդիրներին:

ԽՆԴԻՐ 5.2. Մեծացնել մասնաճյուղի ֆինանսական միջոցների ներհոսքը և բազմազան դարձնել դրանց աղբյուրները:

ԽՆԴԻՐ 5.3. Բարձրացնել մասնաճյուղի ֆինանսական ռեսուրսների կառավարման և օգտագործման արդյունավետությունը:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով)

- 2016 թվականին 2012 թ. նկատմամբ՝
  - արտաբյուջեային մուտքերի աճը առնվազն 20%:

- աշխատողների միջին ամսական աշխատավարձի աճը՝ առնվազն 20%:
- Կայունացման ֆոնդի հաշվեկշիռը բյուջեում՝ առնվազն 7%:
- Զարգացմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռը՝ առնվազն 10%:
- Ինֆրակառուցվածքի պահպանմանն ուղղվող միջոցների հաշվեկշիռը՝ առնվազն 5%:
- Ուսանողներին հատկացվող ֆինանսական օգնության (ներառյալ ուսման վարձերի զեղչերը) և մասնաճյուղի վճարովի ուսուցումից արտաբյուջեային մուտքերի հարաբերությունը՝ 1/30:
- Աշխատողների սոցիալական օգնության ֆոնդի հաշվեկշիռը բյուջեում՝ առնվազն 1%:
- Աշխատողների խրախուսման ֆոնդի հաշվեկշիռը բյուջեում՝ առնվազն 1,5%:

**ՆՊԱՏԱԿ 6. ՄԱՍՆԱՃՅՈՒՂՆ ԱՊԱՀՈՎԵԼ ԱՐԴԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՀՈՒՆՉ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐՈՎ, ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԻՐԱՌՈՒՄ:**

ԽՆԴԻՐ 6.1. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը մասնաճյուղի կրթական և գիտական գործընթացներում:

ԽՆԴԻՐ 6.2. Զարգացնել մասնաճյուղի տեղեկատվական ռեսուրսները և ապահովել դրանց մատչելիությունն ու օգտագործման արդյունավետությունը:

ԽՆԴԻՐ 6.3. Ապահովել ՀՊՃՀ-ում ձևավորված միասնական տեղեկատվական համակարգի ներդնումը մասնաճյուղում:

ԽՆԴԻՐ 6.4. Աշխատանքներ տանել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի տարածաշրջանային ռեսուրսային կենտրոն դառնալու նպատակով:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով)

- Ունենալ առնվազն 8 տեխնոլոգիական կարողությամբ և 2 հեռաուսուցման լսարաններ:
- Հեռաուսուցման գործող ինֆրակառուցվածք:
- Էլեկտրոնային ռեսուրսների օգտագործմամբ դասընթացների հաշվեկշիռը՝ առնվազն 45-50%:
- Էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառում դասախոսների առնվազն կեսի կողմից:
- Մասնաճյուղի տեղեկատվական ռեսուրսների և նոր տեխնոլոգիաների ներդրման պլանավորման և զարգացման խորհուրդ:
- Անդամակցություն տեղեկատվական ռեսուրսների համալսարանական պորտալին:
- Մասնաշենքերում գործող անլար ինտերնետային կապ:
- Ուսանողների տարեկան միջին թվի և ուսումնական գործընթացում ներգրավված քոմպիյութերների հարաբերակցությունը՝ ոչ ավելի քան 7:
- ՀՊՃՀ-ի առաջատար տեղեկատվական տեխնոլոգիաների ուսումնակրթական և հեղափոխական ազգային ռեսուրսային կենտրոնի տարածաշրջանային մասնաճյուղ:

ՆՊԱՏԱԿ 7. ԶԱՐԳԱՅՆԵԼ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ ԵՎ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ-ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՏԱՆԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ԽՆԴԻՐ 7.1. Ապահովել մասնաճյուղի գիտական ներուժի ու նյութատեխնիկական բազայի զարգացումը և գիտահետազոտական աշխատանքներում դասախոսական կազմի ներգրավվածության ընդլայնումը:

ԽՆԴԻՐ 7.2. Խթանել մասնաճյուղի կիրառական հետազոտությունների իրականացումը և արդյունավետության բարձրացումը, նպաստել արդյունքների առևտրայնացմանը:

ԽՆԴԻՐ 7.3. Ապահովել մասնաճյուղի ներգրավվածությունը միջազգային գիտական ծրագրերում:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով)

- 2016 թվին մասնաճյուղի դասախոսական կազմի առնվազն 40%-ի մասնակցություն գիտահետազոտական աշխատանքներին:
- Մասնաճյուղի հետազոտական նախագծերի ծավալը 2016 թվին՝ առնվազն՝
  - գիտության արտաբյուջետային ֆինանսավորման տարեկան աճ 5%-ով,
  - պայմանագրային աշխատանքների ծավալի աճ՝ 2 անգամ,
  - մեկ դասախոսին ընկնող հետազոտական հատկացումների տարեկան աճ՝ 5%-ով:
- Գիտության վրա ծախսված գումար/ արդյունքում ստացված գումար հարաբերակցությունը միջին տարեկան կտրվածքով՝ առնվազն 2:1:
- Առնվազն 1 գիտահետազոտական լաբորատորիա և (կամ) կենտրոն:
- Մասնաճյուղում գործող լիարժեք ինովացիոն խորհուրդ:

ՆՊԱՏԱԿ 8. ԸՆԴՀԱՅՆԵԼ ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ, ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼ ԱՐՏԱՔԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ, ԶԱՐԳԱՅՆԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ

ԽՆԴԻՐ 8.1. Ամրապնդել և ընդլայնել մասնաճյուղի գործընկերային կապերը տարածաշրջանի արտադրական ձեռնարկությունների, այլ կազմակերպությունների և հանրային կառույցների հետ:

ԽՆԴԻՐ 8.2. Մասնաճյուղի զարգացման ծրագրերում շրջանավարտների, նվիրատու և հովանավոր կազմակերպությունների ու անհատների ներդրումների իրականացման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

ԽՆԴԻՐ 8.3. Զարգացնել հասարակության հետ մասնաճյուղի կապերը, ապահովել հանրային ծրագրերում մասնաճյուղի առավելագույն ներգրավումը:

ԽՆԴԻՐ 8.4. Ձգտել ապահովելու մասնաճյուղի պատշաճ մասնակցությունը ՀՊՃՀ-ի միջազգային համագործակցության ծրագրերին, նպաստել Բոլոնիայի գործընթացի հայաստանյան զարգացումներում ՀՊՃՀ-ի առաջատար դերի պահպանմանը:

Առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (հինգ տարվա կտրվածքով)

- Մասնաճյուղ-արդյունաբերություն փոխկապակցության նորովի գործող համակարգ (կառույց), հիմնական պարավիրատու կազմակերպությունների վերաբերյալ տարեկան պարբերականությամբ թարմացվող տվյալների բազա (սկսած 2012/2013 ուստարվանից):
- Երկարաժամկետ պայմանագրային հիմունքներով գործող համապետ նուսումնական կենտրոն(մասնաճյուղ, ամբիոն, լաբորատորիա)՝ տեղական և արտասահմանյան առաջատար ընկերությունների հետ (2016թ.՝1-2):
- Մասնաճյուղի հետ համագործակցող գործընկեր ձեռնարկությունների թիվը (ըստ կնքված պայմագրերի)՝ տարեկան 10-15:
- Շրջանավարտների տվյալների բազա՝ էլեկտրոնային կապի հնարավորություններով:
- Արտաքին ներդրումների ու նվիրատվությունների հաշվեկշռային աճ՝ արտաբյուջեային տարեկան ընդհանուր մուտքերի 5-10%-ի չափով:
- Արտաքին («Պոլիտեխնիկ» հիմնադրամը ներառյալ) հովանավորությամբ իրականացվող առնվազն 5 զարգացման նախագծեր և ծրագրեր (5 տարվա կտրվածքով):
- Մասնաճյուղի հնարավորությունների և ծառայությունների մարքեթինգի իրականացման միասնական ծրագիր:
- Մասնաճյուղի PR ակտիվության (լրատվական-գովազդային և մարքեթինգային միջոցառումներ) աճ՝ առնվազն 1,5 անգամ՝ 2011 թ. ցուցանիշի նկատմամբ:
- Մասնաճյուղի վերաբերյալ ՋԼՄ անդրադարձերի (PR արդյունավետության) թվի աճ՝ առնվազն 1,5 անգամ՝ 2011 թ. ցուցանիշի նկատմամբ:
- Նախագծերի մշակմանը, դրամաշնորհների ձեռքբերմանն ու միջազգային կապերի ձևավորմանն աջակցող խորհուրդ:
- ՀՊՃՀ-ի արտասահմանյան գործընկերային կապերի, միջազգային նախագծերի և այլ ծրագրերի շրջանակներում մասնաճյուղի ներկայացուցիչների շարժը (գործուղումներ) դեպի արտասահմանյան համալսարաններ՝ տարեկան 1-2:

Մշակված են ուղղակի արական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույցները՝ հնգամյա և մեկամյա կտրվածքներով (հավելվածներ 1.5. և 1.6.), որոնք հաստատված են մասնաճյուղի գիտխորհրդի 2012թ. հոկտեմբերի 29-ի նիստում:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.Բ. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:**

2012-2016թթ. ուղղակի արական ծրագրով վերանայվել է մասնաճյուղի առաքելությունը, հստակեցվել են ստրատեգիական թիրախները, առաջադրվել դրանց համապատասխան նպատակները, խնդիրները և դրանց իրագործման համար անհրաժեշտ ուղղությունները: Նախատեսված է ուղղակի արական ծրագրի իրականացման արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունների հրապարակում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում,

կախված արտաքին միջավայրային չկանխատեսված փոփոխությունների հետ, ռազմավարական պլանի ընթացիկ շտկումներ:

Մասնաճյուղը համապատասխան հարցումների միջոցով ապահովում է ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը զարգացման գործընթացներում և իրականացնում նրանց պահանջների բացահայտում (հավելվածներ 1.7. և 1.8.), մասնավորապես 2007/08, 2011/12 ուստարիներին կազմակերպվել են գործատուների պահանջներին շրջանավարտների գիտելիքների և ունակությունների համապատասխանության վերաբերյալ (հավելված 1.9.), իսկ 2007/08, 2010/11 և 2011/12 ուստարիներին՝ ստացված կրթությունից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցումներ (հավելված 1.10.):

Ներկա ռազմավարական ծրագրով 2012/13 ուստարում նախատեսված է իրականացնել մասնաճյուղի ներքին և արտաքին միջավայրերի վերլուծություն, ինչպես նաև՝ մասնաճյուղի գործունեության վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 1.9. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:**

Յուրաքանչյուր տարի իրականացվում է մասնաճյուղի տարեկան գործունեության ամփոփում և հրապարակվում համապատասխան հաշվետվություն:

2007/08 ուստարում իրականացվել է մասնաճյուղի գործունեության ինքնավերլուծություն, կատարվել կրթության որակի մոնիտորինգ և պլանավորում:

2012 թ.-ին իրականացվել են 2007-2011թթ. ստրատեգիական պլանի իրականացման արդյունքների մանրամասն վերլուծություն, SWOT վերլուծություն և գալիք հնգամյակում մասնաճյուղի զարգացման ռազմավարական հիմնական թիրախների առաջադրում (հավելված 1.11.):

SWOT վերլուծություն	
Ուժեղ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>• Մասնաճյուղի հստակ առաքելություն,</li> <li>• Առաքելությանը համահունչ նպատակները և խնդիրներն արտացոլող ռազմավարական ծրագիր,</li> <li>• Կանոնադրության առկայություն,</li> <li>• Առաքելությանը համապատասխանող պետական կրթական չափորոշիչների համաձայն ձևավորված կրթական ծրագրեր,</li> <li>• Սերտ համագործակցություն արդյունաբերական ձեռնարկությունների հետ, ուսումնական ծրագրերի և շրջանավարտների ծառայունակության վերաբերյալ հետադարձ կապի առկայություն,</li> <li>• Զարգացման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը ապահովող ու նրանց պահանջները բացահայտող համապատասխան հարցումների իրականացում,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>• Լեռնամետալուրգիական արդյունաբերության մասնագետների համար վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ անցկացնելու բավարար փորձ,</li> <li>• Մշտական աջակցություն ՀՊՃՀ Երևանի կրթահամալիրի և Գյումրու մասնաճյուղի կողմից,</li> <li>• Շարունակական ֆինանսական և այլ բնույթի աջակցություն «ԶՊՄԿ» ՓԲԸ ու այլ գործընկեր կազմակերպությունների կողմից,</li> <li>• Պրակտիկաների անցկացման կայուն հենք (բազա), արտադրական ուսուցման և փորձառության կազմակերպման հնարավորություն արդյունաբերական ձեռնարկություններում,</li> <li>• Մասնաճյուղի շրջանավարտների ներկայություն Սյունիքի մարզի արդյունաբերական և այլ ճյուղերի ճարտարագիտատեխնիկական և ղեկավար կազմերում,</li> <li>• Մասնաճյուղի գործունեության գնահատման փորձի առկայություն:</li> </ul>
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>• Հիմնական դասախոսական կազմում գիտական աստիճան և (կամ) կոչում ունեցող դասախոսների ցածր հաշվեկշիռ,</li> <li>• Դասախոսական կազմի համալրման սահմանափակ ռեսուրսներ,</li> <li>• Դասախոսական կազմի՝ գիտահետազոտական աշխատանքներում անբավարար ներգրավվածություն և ցածր շահագրգռվածություն,</li> <li>• Դասախոսական կազմի գերակշիռ մասի մոտ ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք կատարելու ունակության և կարողության ոչ ցանկալի մակարդակ,</li> <li>• Կատարելագործման դասընթացներին աշխատողների մասնակցության բացակայություն,</li> <li>• Կադրային ներուժի զարգացման ռազմավարական ծրագրի բացակայություն,</li> <li>• Համեմատաբար հնացած ուսումնական և լաբորատոր բազա, ոչ համաչափ ռեսուրսաապահովում լաբորատորիաների միջև,</li> <li>• Գրադարանային ռեսուրսների անբավարար նորացում,</li> <li>• Որոշակի անհամապատասխանություն ուսանողների ցածր ուսումնական շահագրգռվածության և բարձր առաջադիմության միջև, ոչ բավարար համագործակցություն ուսանողների և դասախոսների միջև,</li> <li>• Արտադրական կապերի և ուսանողների կարիերայի աջակցման հարցերով համակարգողի գործունեության համեմատաբար նեղ շրջանակներ,</li> <li>• Կրթական ծրագրերի որակի գնահատման և վերանայման</li> </ul>

	<p>գործընթացներում ուսանողների և արտաքին շահակիցների ոչ բավարար մասնակցություն,</p> <ul style="list-style-type: none"> <li>• Կրթական վերջնարդյունքների հստակ սահմանման և գնահատման բավարար փորձի բացակայություն,</li> <li>• Ռազմավարական որոշ խնդիրների լուծման համար սեփական անբավարար ֆինանսական ռեսուրսներ:</li> </ul>
<p>Հնարավորություններ</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Հեռավար կրթության և նոր կրթական տեխնոլոգիաների ու մեթոդների ներմուծում,</li> <li>• Ներգրավում տեղային և տարածաշրջանային հանրային ծրագրերում և ծառայություններում,</li> <li>• Ռազմավարական գործակցություն հիմնական գործատու կազմակերպությունների հետ՝ կրթական ծրագրերի արդիականացման և մասնաճյուղի շրջանավարտների ծառայունակության բարձրացման ուղղությամբ,</li> <li>• Գործարար և արտադրական գործակցային կապերի զարգացում Սյունիքի մարզի հիմնարկ ձեռնարկությունների հետ,</li> <li>• Սյունիքի հանքարդյունաբերական և այլ ձեռնարկությունների տնտեսական աճի տեմպերի բարձրացման միտում, ճարտարագիտական կադրերի և մասնաճյուղի վճարովի ծառայությունների պահանջարկի աճ,</li> <li>• Սյունիքի մարզպետարանի և «ԶՊՄԿ» ՓԲԸ կողմից մասնաճյուղի զարգացմանն աջակցելու պատրաստակամություն,</li> <li>• ՀՊՃՀ միջազգային կապերի ընդլայնում,</li> <li>• ՀՀ-ում Բոլոնիայի գործընթացների շարունակական զարգացում,</li> <li>• Կրթական ծրագրերի հավատարմագրման հնարավորություն:</li> </ul>
<p>Վտանգներ</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Մասնաճյուղի հետազոտական ծառայությունների նկատմամբ տարածաշրջանի հիմնարկ-ձեռնարկությունների կողմից ցուցաբերվող թերահավատություն, որի արդյունքում՝ նշված ծառայությունների ցածր պահանջարկվածություն տարածաշրջանում,</li> <li>• Աշխատավարձի մակարդակների աճող անհամապատասխանություն կրթության ոլորտի և այլ ոլորտների կազմակերպությունների միջև, որի հետևանքով հիմնական որակյալ դասախոսական կադրերով մասնաճյուղի դասախոսական կազմի համալրման դժվարություններ,</li> <li>• Բուհական աշխատողների սոցիալական ոչ բարձր երաշխիքներ, մասնավորապես աշխատողների չընդգրկվածություն սոցիալական փաթեթում,</li> <li>• Ուսման նկատմամբ դպրոցականների ցածր շահագրգռվածություն և դիմորդների գիտելիքների ոչ բարձր</li> </ul>

	<p>մակարդակ,</p> <ul style="list-style-type: none"> <li>• Չկանխատեսվող զարգացումներ ճարտարագիտական մասնագիտությունների աշխատաշուկայում,</li> <li>• Պետական ոչ բավարար ֆինանսավորում և նյութատեխնիկական աջակցություն:</li> </ul>
--	---

**ՉԱՓԱՆԻՇ-2 ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

**ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:**

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.Ա. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:**

Մասնաճյուղն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենքներով և իրավական ակտերով, ՀՊՃՀ և իր կանոնադրություններով:

Մասնաճյուղի ուսումնական, գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող կառավարման մարմինը մասնաճյուղի գիտական խորհուրդն է (հավելված 2.1.), որի լիազորությունների ժամկետը 5 տարի է և գործում է համաձայն մասնաճյուղի կանոնադրության և իր կանոնակարգի ու աշխատակարգի (հավելված 2.2.):

Մասնաճյուղի ընթացիկ գործունեության ղեկավարումը, իր իրավասության սահմաններում և մասնաճյուղի կանոնադրությանը համապատասխան, իրականացնում է տնօրենը (հավելված 2.3.):

Մասնաճյուղում առկա է տնօրենին կից խորհրդակցական մարմին՝ մասնաճյուղի տնօրինությունը (հավելված 2.4.), որը մասնաճյուղի կանոնադրությանը համաձայն և իր լիազորությունների շրջանակներում, քննարկում է մասնաճյուղի ընթացիկ գործունեությանը վերաբերող բոլոր հարցերը (հավելված 2.5.):

Մասնաճյուղն իր ֆինանսական ռեսուրսներն ուղղում է կանոնադրական և ռազմավարական խնդիրների իրականացմանը, սոցիալական և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումների կատարմանը: Ֆինանսական ռեսուրսների գոյացման աղբյուրներն են ՀՀ պետական բյուջեից հատկացումները, ՀՀ օրենսդրությամբ չարգելված և ՀՊՃՀ ու մասնաճյուղի կանոնադրություններով թույլատրված ձեռնարկատիրական գործունեության արդյունքում գոյացած միջոցները, ինչպես նաև իրավաբանական ու ֆիզիկական անձանց կատարած նվիրատվությունները, բարեգործական և հովանավորչական նպատակային մուծումները: Մասնաճյուղն իր ֆինանսական ռեսուրսները տնօրինում է համաձայն ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) ՊՈԱԿ Կապանի մասնաճյուղի կանոնադրությունով նախատեսված ընթացակարգի (հավելված 2.6.):



Մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների ցանկը բերված է հավելված 2.7.-ում, իսկ կառուցվածքային ստորաբաժանումներից ֆակուլտետի, բաժանմունքի և ամբիոնի գործունեության կանոնակարգերը բերված են հավելված 2.8.-ում:

Մասնաճյուղի կառավարման մարմինների՝ գիտական խորհրդի և տնօրենի ընտրությունը կատարվում է համաձայն սահմանված կարգի (հավելված 2.2. և 2.9.):

Հավելված 2.10.-ում բերված է մասնաճյուղի կազմակերպական կառուցվածքի սխեմատիկ պատկերը՝ ըստ ենթակայության և հաղորդակցության կապերի:

Որտեղ ներկայացված են մասնաճյուղի կառավարման մարմինները, տնօրենին անմիջականորեն ենթակա մարմինները և աշխատակիցները, տնօրենի տեղակալների համակարգման ոլորտները, ֆակուլտետները, բաժանմունքը, ամբիոնները, լաբորատորիաները և այլն:

Մասնաճյուղում աշխատակիցների աշխատանքի ընդունումը, այլ աշխատանքի տեղափոխումը, աշխատանքից հեռացումը, խրախուսումը և նրանց նկատմամբ տույժի կիրառումը կատարվում է համաձայն ՀՀ օրենսդրության, ՀՀ կառավարության որոշումների, ՀՊՃՀ և մասնաճյուղի կանոնադրությունների, մասնաճյուղի ներքին կարգապահական կանոնների (հավելված 2.11) և այլ իրավական ակտերի:

Մասնաճյուղն իր նպատակների իրականացման համար ունի մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, մասնավորապես.

1) *Դասախոսական հիմնական կազմում գիտական աստիճան ունեն 29,73%-ը, իսկ լրիվ դասախոսական կազմում՝ 31,25%-ը: Աստիճանակիր դասախոսներից 2-ը գիտությունների դոկտոր են: Հիմնական դասախոսական կազմում ընգրկված է 37, իսկ լրիվ դասախոսական կազմում՝ 48 դասախոս: Մասնաճյուղի դասախոսական հիմնական կազմի միջին տարիքը կազմում է 46,4 տարի: Թեև դեռ աստիճանակիր դասախոսների հաշվեկշիռը չի գերազանցում 50% ցուցանիշը, սակայն դասախոսական կազմի հիմնական մասը երկարամյա և փորձառու դասախոսներ են:*

2) *Մասնաճյուղում նյութատեխնիկական ռեսուրսների ապահովումն հիմնականում մոտ (95%) իրականացվում է արտաբյուջեփային միջոցների հաշվին: 2011/12 ուսումնական տարում գնվել են անհրաժեշտ համակարգչային տեխնիկա և սարքավորումներ՝ գրատարախոսակներ, ամբիոններ, փնտեսական գույք:*

*2012-2016թթ. ռազմավարական ծրագրով նախատեսված են կոնկրետ միջոցառումներ՝ միտված արդի կրթական պահանջներին բավարարող դասախոսական կազմի ձևավորմանը (նպատակ 3):*

Կազմակերպական կառուցվածքի արդյունավետության համար անհրաժեշտ է տնտեսավարման և սպասարկման ոլորտի աշխատակիցներին միավորել մեկ կառուցվածքային միավորումում՝ ստեղծելով «Տնտեսավարման և սպասարկման մաս»:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.բ. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:**

Մասնաճյուղի դասախոսական կազմի ներկայացուցիչներն ընդգրկված են գիտական խորհրդի և ֆակուլտետների խորհուրդների կազմերում (հավելված 2.12.):

Մասնաճյուղի գիտական խորհրդի և ֆակուլտետների խորհուրդների անդամների 25%-ը ուսանողական համակազմի ներկայացուցիչներն են, իսկ ուսանողական խորհրդի նախագահը հաղիսանում է մասնաճյուղի տնօրինության անդամ (հավելված 2.13.):

Մասնաճյուղի գործունեությանն առնչվող աշխատանքային պլանները, ռազմավարական ծրագիրը և դրա իրականացման հնգամյա ու տարեկան պլան-ժամանակացույցերը, ներքին կարգապահական կանոնները մինչ գիտական խորհուրդում քննարկելն ուղղվել են բոլոր ամբիոնները և ուսխորհուրդ՝ նախօրոք ծանոթացման և համապատասխան առաջարկությունների նախապատրաստման համար:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.գ. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:**

Մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական ծրագրում բերված խնդիրների իրականացման և առաջընթացի ցուցանիշների ապահովման նպատակով կազմված և գիտխորհրդի նիստով հաստատված են ռազմավարական ծրագրի իրականացման հնգամյա և 2012/13 ուստարվա պլան-ժամանակացույցները (հավելված 1.5. և 1.6): Մասնաճյուղում առկա են մասնաճյուղի, ֆակուլտետների, բաժանմունքի և ամբիոնների տարեկան աշխատանքային պլանները (հավելված 2.14.):

Վերը նշված պլանների իրականացման մշտադիտարկման մեխանիզմներ են հանդիսանում մասնաճյուղի, ֆակուլտետների, բաժանմունքի և ամբիոնների տարեկան հաշվետվությունները, ռազմավարական ծրագրի իրականացման տարեկան և հնգամյա հաշվետվությունները, կատարված աշխատանքների վերաբերյալ համապատասխան ցեկուցումները, դասախոսների տարեկան հաշվետվությունները և մշտական հսկողությունը:

Մասնաճյուղի տարեկան աշխատանքային պլանում, ռազմավարական ծրագրի հնգամյա և տարեկան պլան-ժամանակացույցերում հստակ նշված են միջոցառումների իրականացման ժամկետները և պատասխանատուները, որը թույլ է տալիս գործընթացների իրականացման հարցում մտցնել հստակություն և բարձրացնել մասնաճյուղի գործունեության արդյունավետությունը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.դ. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:**

Իրականացվել է մասնաճյուղի 2007-2011թթ. ստրատեգիական պլանի իրականացման արդյունքների վերլուծություն, իրականացվել է SWOT վերլուծություն, մշակվել է մասնաճյուղի զարգացման 2012-2016թթ. ռազմավարական հիմնական

թիրախները (հավելված 1.11), ինչպես նաև պարբերաբար իրականացվում են հարցումներ գործատուների պահանջներին շրջանավարտների գիտելիքների և ունակությունների համապատասխանության ու ստացված կրթությունից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցումներ (հավելված 1.7., 1.8., 1.9. և 1.10.):

2012-2016թթ. ռազմավարական ծրագրով նախատեսվում է իրականացնել մասնաճյուղի արտաքին և ներքին միջավայրերի վերլուծություն, լրացուցիչ և շարունակական մասնագիտական կրթության պահանջարկի մշտական մոնիթորինգ, կրթական ծրագրերից և շրջանավարտներից գործատուների բավարարվածության վերաբերյալ պարբերական ուսումնասիրություններ, կրթական ծրագրերից ուսանողների բավարարվածության վերաբերյալ ամենամյա սոցիոլոգիական ուսումնասիրություններ, դասախոսական առկա ներուժի գնահատում (հաշվառում), գրադարանային ռեսուրսների վիճակի ուսումնասիրություն, ուսումնագիտական լաբորատոր բազայի առկա վիճակի գնահատում, աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակի պարբերաբար գնահատում, էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների վիճակի ուսումնասիրություն, մասնաճյուղի գիտական հենքի առկա վիճակի ուսումնասիրություն, տարածաշրջանի աշխատաշուկայի առկա վիճակի և զարգացման միտումների մոնիթորինգ և մասնաճյուղի գործունեության վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն (հավելված 2.15.):

Մասնաճյուղի պլանների գնահատման և վերանայման մեխանիզմներն են հաշվետվությունների վերլուծությունները, զեկուցումները և տվյալների հաշվառումը:

Մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի մշակման ժամանակ իրականացվել է 2007-2011թթ. ստրատեգիական պլանի իրականացման վերլուծություն (հավելված 1.11.), որտեղ վեր են հանվել մասնաճյուղի գործունեության վրա ազդող թե արտաքին և թե ներքին գործոնները: Վերլուծության արդյունքները հաշվի են առնվել ներկա ռազմավարական ծրագրի մշակման ժամանակ:

## **ՉԱՓՈՐՈՇԻՉ 2. Ե. Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):**

Աշխատանքային պլանների, պլան-ժամանակացույցերի առկայություն, իրականացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվության, հաշվետվությունների ու զեկուցումների ներկայացում, վերլուծություն և գնահատում, քննարկումներ տնօրինության նիստերում, մասնաճյուղի գիտական խորհրդում, ֆակուլտետների խորհուրդներում և ամբիոնների գիտամանկավարժական կազմերի նիստերում ու բարելավմանը միտված համապատասխան առաջարկությունների առաջադրում:

Մասնաճյուղում վերը թվարկված մեխանիզմների միջոցով ձևավորվում է որակի կառավարման մշակույթ և նկատվում է դրա արդյունավետության շարունակական բարելավման միտում:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.գ. ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:**

Մասնաճյուղում իրականացվում է առաջադիմության և որակի, դիմորդների և ընդունելության, ուսանողներ շարժի, ինչպես նաև այլ գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն և գնահատում:

Մասնաճյուղում իրականացվող կրթական ծրագրերի և այլ գործընթացների գնահատման մեխանիզմները թույլ են տալիս արդյունավետ իրականացնել առաքելությունը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 2.է. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:**

Մասնաճյուղում իրականացվում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող հետևյալ մեխանիզմները. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների քննարկում, գործատուների մոտ համապատասխան հարցման իրականացում, մագիստրատուրայում մասնաճյուղի շրջանավարտների ուսումնառության վերաբերյալ դիտարկումներ:

Նշված մեխանիզմները թույլ են տալիս վեր հանել բացթողումները, ուսանողների ավարտական աշխատանքները դարձնել արդիական և գործատուների առաջադրած պահանջներին համահունչ, ինչպես նաև՝ գնահատել շրջանավարտների ստացած գիտելիքների և ձեռք բերած հմտությունների ու կարողությունների կիրառման մակարդակը:

SWOT վերլուծություն	
Ուժեղ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>• Մասնաճյուղի ռազմավարական ծրագրի և դրա իրականացման հնգամյա ու տարեկան պլան-ժամանակացույցերի առկայություն,</li> <li>• Մասնաճյուղի և տնօրինության նիստերի տարեկան աշխատանքային պլանների առկայություն,</li> <li>• Գիտական խորհրդի և ֆակուլտետների խորհուրդների տարեկան աշխատանքային պլանների առկայություն,</li> <li>• Ֆակուլտետների, բաժանմունքի և ամբիոնների աշխատանքային պլանների առկայություն,</li> <li>• Գիտական խորհրդում, տնօրինության նիստերում և ֆակուլտետների խորհուրդներում հաշվետվությունների և զեկուցումների ներկայացում, դրանց վերլուծություն և</li> </ul>

	<p>բարելավմանը միտված առաջարկությունների ներկայացում, համապատասխան որոշումների ընդունում և կիրառում,</p> <ul style="list-style-type: none"> <li>• Մասնաճյուղում առկա բոլոր պլանների իրականացման նկատմամբ մշտական վերահսկողության առկայություն,</li> <li>• Դասախոսական կազմի և վարչական կազմի միջին տարիք,</li> <li>• Մասնաճյուղի կառավարման գործընթացներում դասախոսների և ուսանողների մասնակցություն:</li> </ul>
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>• Մասնաճյուղի կառավարման գործընթացին դասախոսական կազմի և ուսանողների մասնակցության ոչ բավարար ակտիվություն,</li> <li>• Կատարելագործման դասընթացներին աշխատողների մասնակցության բացակայություն,</li> <li>• Կադրային ներուժի զարգացման ռազմավարական ծրագրի բացակայություն:</li> </ul>
Հնարավորություններ	<ul style="list-style-type: none"> <li>• Մասնաճյուղի կառավարման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման հնարավորություն,</li> <li>• Կառավարման համապատասխան ոլորտներում որակյալ մասնագետների ընդգրկման հնարավորություն,</li> <li>• Վարչական արդյունավետ կառույցների ստեղծման հնարավորություն:</li> </ul>
Վտանգներ	<ul style="list-style-type: none"> <li>• Աշխատավարձի մակարդակների աճող անհամապատասխանություն կրթության ոլորտի և այլ ոլորտների կազմակերպությունների միջև, որի հետևանքով հիմնական որակյալ դասախոսական կադրերով մասնաճյուղի դասախոսական կազմի համալրման դժվարություններ,</li> <li>• Բուհական աշխատողների սոցիալական ոչ բարձր երաշխիքներ, մասնավորապես աշխատողների չընդգրկվածություն սոցիալական փաթեթում:</li> </ul>

### ՉԱՓԱՆԻՇ -3 ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

**ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:**


**ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.Ա ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:**

Մասնաճյուղում իրականացվում են ՄՄ և բարձրագույն մասնագիտական(բակալավրիատ) կրթական ծրագրեր, որոնք համահունչ են մասնաճյուղի առաքելությանը: Կրթական ծրագրերը ունեն կրթության պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կրթական չափորոշիչներ և դրանց համապատասխանող կրթական ծրագրերի նկարագրեր, որտեղ մանրամասն

նկարագրված են շրջանավարտներին շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքները: Կրթական ծրագրերը համապատասխանում են ՀՀ կառավարության կողմից հաստատված(ՀՀ կառավարության 2011թ.մարտի 31-ին N332-Ն որոշում) ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի համապատասխան մակարդակների առաջադրած պահանջներին:

ՀՊՃՀ-ի կողմից, աշխատաշուկայի և տնտեսության զարգացումներով պայմանավորված, պարբերաբար վերանայվում են կրթական ծրագրերի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը: Իրականացվող կրթական ծրագրերի գնահատման նպատակով, համաձայն ՀՊՃՀ-ում մշակված ուսումնական ստորաբաժանումների ինքնավերլուծության և գործունեության գնահատման հիմնական դրույթների (Հավելված 3.1), մասնաճյուղում իրականացվել է ինքնավերլուծության և գործունեության արդյունքների գնահատում: (Հավելված 3.2): Ուսման որակի վրա էական ազդեցություն ունեցող 23 ցուցանիշների /ԳԱՑ-երի/ հիման վրա կազմվել է ինքնավերլուծության հաշվետվություն և բարելավման միջոցառումների պլան: Ստորև ներկայացվում է 2007թ.մասնաճյուղի ուսուցման որակի մոնիտորինգի դիագրամը:

2007թ. Ուսուցման որակի մոնիթորինգի դիագրամը



1. Ուսումնական պլանների համապատասխանությունը պետական ստանդարտներին
2. Պրոֆեսորների և դոցենտների % - ը ՊԴԱ - ի ընդհանուր կազմում
3. Դասավանդողների՝ պրոֆեսորների և դոցենտների միջին տարիքը
4. Դասավանդողների գիտական ակտիվությունը
5. Դասավանդողների մեթոդական ակտիվությունը
6. ՊԴԱ- ի որակավորման բարձրացումը
7. Ուսումնական գրականությամբ ապահովվածությունը
8. Ուսումնական էլեկտրոնային նյութերի առկայությունը
9. Ինտերնետին միացված համակարգիչների տոկոսը
10. Ուսումնական գործընթացում օգտագործվող համակարգիչների տոկոսը

II. Շենքային ապահովումը

12. Լաբորատորային սարքավորումներով ապահովումը
13. Ժամանակակից տեխնիկական սարքավորումներով լսարանների ապահովումը
14. Ուսումնական պրակտիկանների անցկացման կարգի համաձայնեցում ընդունված ստանդարտներին
15. Պրակտիկաների հաստատուն բազաների ապահովումը
16. ճանաչված գիտական դպրոցի առկայությունը
17. Գիտական աշխատանքներում ներգրավված դասախոսների տոկոսը
18. Գիտական գրանտները
19. Պետ. բյուջետային ֆինանսավորմամբ հետազոտական թեմաները
20. Ուսանողների միջին առաջադիմությունը
21. Ուսանողական գիտական հրատարակումները
22. Ուսանողների/ասպիրանտների գիտական մասնակցությունը հետազոտական ծրագրերին:
23. Գործատուների պահանջներին շրջանավարտների գիտելիքների և ունակությունների համապատասխանությունը

2012-16թթ ՌԾ-ով նախատեսված է մասնաճյուղում փուլային անցման իրականացում «թյունինգյան» մեթոդաբանությամբ նոր կրթական ծրագրերի, (2012-16թթՌԾ; ՆՊԱՏԱԿ 2. ԽՆԴԻԴ 2.2.1 և 2.3.2 ռազմավարական ուղղությունները):

- Մասնաճյուղում ապահովել փուլային անցում ՀՊՃՀ-ում «թյունինգյան» մեթոդաբանությամբ մշակվող նոր կրթական ծրագրերի:
- Համաձայն ՀՊՃՀ-ում մշակված պլանի՝ իրականացնել անցում մասնաճյուղի մասնագիտությունների մոդուլային կրեդիտային հենքով ձևավորված ճկուն ուսումնական ծրագրերի՝ բարձրացնելով ուսանողների ինքնուրույն աշխատանքի դերը և ուսումնառության արդյունավետությունը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.Բ ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:**

Մասնաճյուղում ուսանողների ուսումնառությունը իրականացվում է համաձայն ՀՊՃՀ-ի կողմից հաստատված ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի: Ուսուցումը իրականացվում է դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների, սեմինարների միջոցով: Գիտելիքների առավել հիմնարար յուրացման համար ուսանողներին տրվում են հետևյալ անհատական առաջադրանքներ՝ հաշվեգրաֆիկական աշխատանք, ռեֆերատ, կուրսային աշխատանք(նախագիծ), որոնք նպաստում են ուսանողակենտրոն ուսուցման մշակույթի ձևավորմանը: Շրջանավարտների գործնական պատրաստականության մակարդակի բարելավմանը էապես նպաստում է Սյունիքի մարզում գործող լեռամետալուրգիական ձեռնարկություններում արտադրական և նախաավարտական պրակտիկաների իրականացումը:

Ուսուցման գործընթացում կիրառվում են տեղեկատվական տեխնոլոգիաներ և էլեկտրոնային ռեսուրսներ:

Ուսանողների գիտելիքների, ձեռք բերած հմտությունների և կարողությունների համապատասխանության գնահատումը, ըստ կրթական ծրագրերի ակնկալվող վերջնարդյունքների, իրականանացվում է ամփոփիչ ատեստավորման և ավարտական աշխատանքի միջոցով:

Ուսանողակենտրոն ուսուցման մշակույթի զրգացման նպատակով 2012-16թթ ՌԾ-ով նախատեսված է իրականացնել անցում մասնագիտությունների մոդուլային կրեդիտային հենքով ձևավորված ճկուն ուսումնական ծրագրերի, ինչպես նաև ապահովել կրեդիտային համակարգի ամբողջական կիրառումը մասնաճյուղում: Նշված միջոցառումների իրականացումը թույլ կտա բարձրացնել ուսանողների ինքնուրույն աշխատանքի դերը և ուսումնառության արդյունավետությունը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.4 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:**

Կապանի մասնաճյուղում ուսանողների գիտելիքների գնահատման քաղաքականությունը՝ ըստ ուսումնառության արդյունքների, իրականացվում է համաձայն «ՀՊՃՀ կրթական ծրագրերի վերջնարդյունքների գնահատման» մեթոդական ուղեցույցի, (հավելված 3.13): որտեղ ներկայացված են կրթական ծրագրերի վերջնարդյունքների գնահատման հիմնադրույթները և կողմնորոշիչ ցուցանիշները:

Մասնաճյուղում ուսանողների գնահատումը իրականացվում է համաձայն ՀՊՃՀ-ի կողմից մշակված «Ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման ռեյթինգային համակարգի կանոնակարգ»-ով (հավելված 3.14), որը վերջին անգամ լրամշակվել է 2012/13 ուստարվա աշնանային կիսամյակում: Ուսումնառության ընթացքում ակադեմիական ազնվության և գնահատման անաչառության ապահովման համար մասնաճյուղում միջանկյալ ստուգումները, կուրսային աշխատանքները (նախագծերը), ստուգարքները և կիսամյակային քննությունները իրականացվում են հանձաժողովների միջոցով: Գնահատականին համաձայն չլինելու դեպքում ուսանողը իրավասու է բողոքարկել այն համաձայն ՀՊՃՀ ռեկտորատի 2012թ. հոկտեմբերի 18 թիվ 01/05 որոշմամբ հաստատված «Ուսանողների գիտելիքների գնահատման բողոքարկման ընթացակարգ»-ի: Մասնաճյուղի ֆակուլտետներում և ՀՈՒԲ-ում գնահատման արդյունքների գրանցումը և մշակումը իրականացվում է նաև էլեկտրոնային եղանակով:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.7 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանարիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:**

Մասնաճյուղը 2007թ.-ից անցում է կատարել բակալավրի կրթական ծրագրով ուսուցման կրեդիտային համակարգի, որը էապես նպաստում է ուսանողների



շարժունությանը և շնորհված որակավորումների կամ դիպլոմների միջազգայնացմանը:

Մասնաճյուղում կիրառվող ՀՊՃՀ-ի կողմից մշակված ուսումնական պլաններում հստակ տարանջատված են տեսական և գործնական բաղադրիչները: Այդ տարանջատումը նպաստում է ուսանողների կողմից գիտելիքների յուրացման և գործնական հմտությունների ու կարողությունների ձեռք բերման գործընթացը դարձնել առավել հստակ և որակյալ:

տեղական և միջազգային հաստատությունների նույն մասնագիտությունների կրթական ծրագրերի հետ համահունչությունը ապահովվում է ըստ ՀՊՃՀ մշակված համապատասխան քաղաքականությամբ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 3.Ե ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:**

Հաշվի առնելով, որ Կապանի մասնաճյուղը հանդիսանում է ՀՊՃՀ տարածքային ստորաբաժանում, կրթական ծրագրերի մշտադիտարկումը, արդյունավետության գնահատումը և բարելավումը իրակացվում է ըստ ՀՊՃՀ-ի կողմից մշակված քաղաքականության և ընթացակարգերի, որոնք բերված են <<ՀՊՃՀ կրթական ծրագրերի որակի ապահովման ընթացակարգեր>>-ում:(Հավելված 3.5.1):

SWOT վերլուծություն	
Ուժեղ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>Մշտական աջակցություն և վերահսկողություն ՀՊՃՀ կողմից, համապատասխան կանոնակարգերի առկայություն</li> <li>Ինքնավերլուծություն անցկացնելու փորձի առկայություն</li> <li>Ուսումնական ծրագրերի ծառայունակության վերաբերյալ տարածաշրջանի արդյունաբերական ձեռնարկությունների հետ հետադարձ կապի առկայություն</li> </ul>
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>Մոնիթորինգի փորձի բացակայություն</li> <li>Կրթական վերջնարդյունքների գնահատման փորձի բացակայություն</li> <li>Մասնաճյուղի համար սահմանված չեն մասնագիտական ակնկալվող վերջնարդյունքները</li> </ul>
Հնարավորություններ	<ul style="list-style-type: none"> <li>&lt;&lt;Թունիզյան&gt;&gt; մեթոդաբանությամբ նոր կրթական ծրագրերի ներմուծում</li> <li>Անցում մոդուլային կրեդիտային հենքով ձևավորված ճկուն ուսումնական ծրագրերի</li> </ul>

**ՉԱՓԱՆԻՇ 4 – ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ**

**ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:**

## **ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.Ա. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ**

Մասնաճյուղում ուսանողների հավաքագրումը, ընտրությունը և ընդունելությունը իրականացվում է ըստ մասնաճյուղի ընդունելության պլանի (հավելված 4.1- ընդունելության պլանը) համաձայն ՀՀ կառավարության որոշումների և ՀՀ կգն համապատասխան կարգերի (հավելված 4.2 – կցել կարգերը):

Առկա ընդունելությունն իրականացնում է ԳԹԿ-ն, իսկ հեռակա ընդունելությունն ու ՄՄԿ ընդունելությունն իրականացնում է մասնաճյուղը (հավելված 4.3- հանձնաժողովի կազմեր):

Ապագա ուսանողների կողմնորոշման նպատակով կազմվում է միջոցառումների պլան, ըստ որի մասնաճյուղը իրականացնում է մարզի հանրակրթական և ավագ դպրոցներում հանդիպումներ, կազմակերպում է դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար բաց դռների օրեր, հեռուստատեսությամբ և մամուլով տարածում է (հավելված 4.4- հեռուստատեսություն տրված գովազդի փաստաթղթերը, միջոցառումների պլան բուկլետները) գովազդային հոլովակներ և այլն:

Բացի այդ մասնաճյուղը իրականացնում է անվճար նախապատրաստական դասընթացներ առկա և հեռակա ուսուցման դիմորդների համար (հավելված 4.5- հրամաններ):

## **ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.Բ. ՄՈՒՀ-ն ունի կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր**

Մասնաճյուղի կրթական կարիքների վերհանման քաղաքականությունը ամրագրված է մասնաճյուղի 2012-16թթ ռազմավարական ծրագրի նպատակներում և խնդիրներում: Ռազմավարության հիմնական ուղղություններն են

- ՀՊՃՀ-ում գիտելիքների գնահատման առկա համակարգի կատարելագործումից հետո այն ներդնել մասնաճյուղում:
- ՀՊՃՀ-ում առաջավոր մանկավարժական փորձի խրախուսման և տարածման մեխանիզմների ձևավորումից հետո ներդնել դրանք մասնաճյուղում: Նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը, խթանել այս ուղղությամբ նոր նախաձեռնությունները:
- ՀՊՃՀ-ի կողմից մշակված դասախոսի գործունեության ամենամյա պարտադիր գնահատման համակարգի ներդնումից հետո ամենամյա գնահատման արդյունքների ամփոփման գործընթացը զուգակցել դասախոսական կազմի առաջաջման և խրախուսման (պարգևատրման) գործընթացի հետ՝ սահմանելով «Մասնաճյուղի լավագույն դասախոս» ամենամյա մրցանակ:
- Մասնաճյուղի ուսանողական խորհրդի ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ մասնաճյուղում կազմակերպել ամենամյա սոցիոլոգիական ուսումնասիրություններ՝ ՀՊՃՀ-ում մշակված իրականացվող կրթական ծրագրերից ուսանողների բավարարվածության գնահատման չափանիշներով:
- Ապահովել ուսումնական ենթակառուցվածքների հետագա բարելավումն ու արդիականացումը, դրանց միջև կապերի ամրապնդումը, որակյալ

դասավանդման մեթոդական հենքի, տեխնոլոգիական ռեսուրսների, այդ թվում՝ տեխնոլոգիական կարողությամբ լսարանների ցանցի զարգացումը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.9. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար**

Մասնաճյուղը տալիս է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ, ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար, անվճար, այդ թվում նաև ակադեմիական պարտքերը մարելու նպատակով (հավելված 4.6. ամբիոնների դասախոսների խորհրդատվության գրաֆիկների պատճենները): Ամբիոններում առկա են դասախոսների խորհրդատվությունների ժամանակացույցեր, ըստ որոնց իրականացվում են լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություններ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.7. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց**

Մասնաճյուղում ուսանողները հնարավորություն ունեն օգտվելու ուսման տարեկան վարձի՝ մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից (հավելված 4.7-1- ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների հատկացման ընթացակարգ), բողոքարկելու գիտելիքների ստուգման ցանկացած բաղադրիչից և ձևից (հավելված 4.7-2- ուսանողների գիտելիքների գնահատման բողոքարկման ընթացակարգ), ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման ձևից (հավելված 4.7-3 ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի 33- թդ կետը):

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.6. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:**

Մասնաճյուղում գործում է Արտադրական կապերի և ուսանողների կարիերայի աջակցության համակարգող, որն ուսանողների կարիերային նպաստելու համար նպատակ ունի.

- աջակցել սովորողներին կարիերայի նպատակների ձևավորման հարցում
- աջակցել սովորողներին կարիերայի նպատակների իրականացման գործում
- աջակցել սովորողներին և մասնաճյուղն ավարտողներին ընտրված մասնագիտության գծով աշխատանքի որոնման ուղղությամբ: (Հավելված 4.8)

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.2. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում**

Մասնաճյուղում տարվում են աշխատանքներ ֆինանսավորվող գիտահետազոտական թեմաների ձեռքբերման և նրանցում ուսանողների ներգրավման ուղղությամբ: Մասնավորապես մասնաճյուղում ԶՊՄԿ ՓԲԸ ֆինանսավորմամբ իրականացվող «Մոլիբդենային հանքանյութի ֆլոտացման

տեխնոլոգիական գործընթացի հավանականային կառավարման նմանակային մոդելի մշակումը>> թեմայով հետազոտական նախագծի կատարման համար աշխատանքային խմբում ընդգրկված էր նաև ԿՀ 81 ակադեմիական խմբի ուսանող Աննա Կառլենի Սողոմոնյանը (Հավելված 4.9–պայմանագրային աշխատանք կատարողների կազմը՝ ըստ թիվ 01-Գ.2010 պայմանագրի):

ԱԱՊ- ն հանձնաժողովներում մասնաճյուղը ընդգրկում է տվյալ ոլորտի տարածաշրջանում հայտնի ձեռնարկություններից մասնագետներ, որոնք ԱԱՊ - ն ընթացքում և արդյունքում վեր են հանում այն հիմնական ուղղությունները, համաձայն որոնց կարելի է իրականացնել հետազոտական աշխատանքներ: Ելնելով դրանից՝ մասնաճյուղը ստեղծում է հնարավորություն՝ ընտրելով համապատասխան թեմաներ, ուսանողների կողմից հետազոտական, կիրառական աշխատանքներ իրականացնելու համար: (հավելված 4.10- ԱԱՊ–ի 2011-2012թ. հանձնաժողովի նախագահի կարծիքը, 2012-2013թթ. քաղվածք ԿՏ 94 ակադեմիական խմբի ավարտական աշխատանքների թեմաների հրամանից):

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.Է. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պարասխանայրու մարմին:**

Մասնաճյուղում ուսանողների իրավունքների պաշտպանության համար հանդես է գալիս ուսանողական խորհուրդը: Այն մասնաճյուղի ուսանողական ինքնակառավարման, ուսանողներին միավորող, նրանց շահերը պաշտպանող, ընտրովի ներկայացուցչական մարմին է:

Ուխտիրդի լիազորություններն ու գործունեության կարգը, ՀՀ օրենսդրությանը և ենթաօրենսդրական ակտերին համապատասխան, սահմանվում են մասնաճյուղի կանոնադրությամբ, մասնաճյուղի ղեկավար մարմինների որոշումներով և ՀՊՃՀ ուսանողական խորհրդի կանոնակարգով: Խորհուրդն ապահովում է ուսանողական ինքնակառավարման գործընթացները մասնաճյուղի սովորողների շրջանում, արտահայտում և պաշտպանում է նրանց շահերը, նպաստում՝ անհատի համակողմանի զարգացմանը, ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակմանը, ստեղծում կապեր ՀՀ բուհերի գիտական, կրթական և այլ կազմակերպությունների հետ:

Ուխտիրդի հիմնական նպատակն է՝ ուսուցման կազմակերպման ու որակի ապահովման մեջ, հասարակական կյանքում մասնաճյուղի սովորողների սոցիալական դերի և ակտիվության բարձրացումը, արդի հասարակական-տնտեսական պայմաններում շրջանավարտների գործունակության և արդյունավետ գործունեության սատարումը, մասնագիտական, հոգևոր և ստեղծագործական զարգացման նպաստումը:

Խորհուրդն իր նպատակների իրականացման համար լուծում է հետևյալ խնդիրները.

- Աջակցություն ուսումնական գործընթացի կատարելագործման, առաջադիմության բարձրացման, ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման գործընթացին.
- Սովորողների շրջանում տեղեկատվության տարածում, պարբերականների հրատարակում.

- մասնաճյուղի կառավարման մարմիններում սովորողների շահերի ներկայացում և պաշտպանում.
- Ուսանողների և դասախոսների շահերը և դիրքորոշումները մոտեցնելուն ուղղված քայլերի իրականացում.
- Ուսումնական մասնաշենքերում կարգուկանոնի պահպանության աջակցություն.
- Ուսուցման որակի բարձրացման և ծրագրային նորացման վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստում և նպաստում դրանց ընդունմանն ու հետևողական իրականացմանը.
- Հանրապետության և արտասահմանյան երիտասարդական, ուսանողական կազմակերպությունների հետ կապերի ստեղծում և զարգացում.
- Ուսանողական և երիտասարդական տոների անցկացում.
- Աջակցություն հանգստի և ժամանցի կազմակերպմանը.

Մասնաճյուղի ուսանողական ինքնավարության զարգացման և մասնաճյուղի կառավարմանը ուսանողների մասնակցության ապահովման ռազմավարության հիմնական ուղղություններն են

- Զարգացնել ուսանողական ինքնավարությունը՝ ընդլայնելով ուսանողների մասնակցությունը մասնաճյուղի կառավարման գործընթացին:
- Աջակցել մասնաճյուղի ուսանողական խորհրդի արտաքին կապերի զարգացմանը:
- Մեծացնել ուսանողական խորհրդի դերը մասնաճյուղում ընթացող կրթական բարեփոխումների պլանավորման ու իրականացման գործընթացներում:
- Ապահովել կառուցողական համագործակցության զարգացումը մասնաճյուղի վարչակառավարչական կազմի, արհեստակցական կազմակերպության և ուսանողական խորհրդի միջև:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 4.Ը.ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդարարական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ**

- Դասախոսի տարեկան գործունեության գնահատում ամբիոնների և ֆակուլտետի նիստերում, մասնաճյուղի ուսանողական խորհրդի ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ մասնաճյուղում կազմակերպվում է ամենամյա սոցիոլոգիական ուսումնասիրություններ՝ ՀՊՃՀ-ում մշակված իրականացվող կրթական ծրագրերից ուսանողների բավարարվածության գնահատման չափանիշներով:  
(Հավելված 4.11. դասախոսների տարեկան հաշվետվությունները և ուսանողների սոցիոլոգիական հարցման թերթիկները):

SWOT վերլուծություն	
Ուժեղ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>• Գործում է ՀՀ կառավարության, ՀՀ ԿԳՆ կարգեր և ՀՊՃՀ կանոնակարգեր:</li> <li>• Մասնաճյուղի շրջանավարտների ներկայություն Սյունիքի մարզի արդյունաբերական և այլ ճյուղերի</li> </ul>

	<p>ճարտարագիտատեխնիկական ու ղեկավար կազմերում</p> <ul style="list-style-type: none"> <li>• Պրակտիկաների անցկացման կայուն հենք(բազա), արտադրական ուսուցման և փորձառության կազմակերպման հնարավորություն արդյունաբերական ձեռնարկություններում</li> <li>• Տարածաշրջանի արդյունաբերական ձեռնարկություններում մասնաճյուղի շրջանավարտներին աշխատանքով ապահովելու լայն հնարավորություն</li> <li>• Սերտ համագործակցություն արդյունաբերական ձեռնարկությունների հետ, ուսումնական ծրագրերի և շրջանավարտների ծառայունակության վերաբերյալ հետադարձ կապի առկայություն</li> <li>• Ճարտարագիտական(տեխնիկական) կրթության և գիտության ասպարեզում առաջատար, իսկ որոշ ճյուղերում մենաշնորհային դիրք Սյունիքի մարզում</li> <li>• Լեռնամետալուրգիական արդյունաբերության մասնագետների համար վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ անցկացնելու բավարար փորձ</li> <li>• Ուսանողական զարգացող ինքնավարություն և մասնակցություն մասնաճյուղի կառավարման գործընթացներում</li> </ul>
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>• Ավագ դպրոցների, քոլեջների հետ կապի(գործող պայմանագրերի) բացակայություն</li> <li>• արդյունաբերությունների միության և գործատուների հետ թույլ կապեր</li> <li>• Գրադարանային ռեսուրսների անբավարար նորացում</li> <li>• Արտադրական կապերի և ուսանողների կարիերայի աջակցման կենտրոնի(ԱԿ և ՈԻԿԱԿ) գործունեության համեմատաբար նեղ շրջանակներ</li> </ul>
Հնարավորություններ	<ul style="list-style-type: none"> <li>• գործատուների և միջազգային կրթական կազմակերպությունների հետ կապերի զարգացման ծրագրերի մշակում</li> <li>• Մասնաճյուղի կազմում ավագ դպրոցի ստեղծում</li> <li>• Արտասահմանյան դիմորդների և ուսանողների ներգրավում</li> <li>• Ուսանողների ներքին շարժունություն, երկրորդ մասնագիտություն ստանալու կարգերի առկայություն, կրկնակի դիպլոմներ ստանալու հնարավորություն</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>• Գործարար և արտադրական գործակցային կապերի զարգացում Սյունիքի մարզի հիմնարկ-ձեռնարկությունների հետ</li> </ul>
Վտանգներ	<ul style="list-style-type: none"> <li>• ԲՈՒՀ-ի կողմից առկա ուսուցման մուտքի անմիջական հսկման հնարավորության բացակայություն</li> <li>• Արդյունաբերության զարգացման ստրատեգիայի բացակայություն և ինժեներական կրթության վարկանիշի անկում</li> <li>• ինժեներական կրթության ոչ բավարար պետական ֆինանսավորում և աջակցություն</li> <li>• Աճող մրցակցություն մայրաքաղաքի և տարածաշրջանի բուհերի հետ՝ դիմորդների համար</li> <li>• Վճարովի համակազմի համար տարկետման իրավունքի վերացում</li> <li>• Ուսման նկատմամբ դպրոցականների ցածր շահագրգռվածություն և դիմորդների գիտելիքների ոչ բարձր մակարդակ:</li> </ul>

**ՉԱՓԱՆԻՇ 5-ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

**ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնառական կազմով:**

*Կապանի մասնաճյուղը ՌԾ խնդիրների լուծման ու նպատակների իրականացման գործընթացում կարևորվում է գիտական աստիճաններ ունեցող և ՄԿԾ-ին համապատասխան պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ՄԿԾ-երի պահանջներին բավարարող ուսումնառական անձնակազմի առկայությունը:*

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.Ա.ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնառական կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր**

Մասնաճյուղն ունի պրոֆեսորադասախոսական և ուսումնառական կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք իրականացվում են ՀՀ աշխատանքային օրենսդրության և ՀՊՃՀ ներքին կարգին համապատասխան:

Մասնաճյուղում գործում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի թափուր

<b>Ցուցանիշ 3.10.</b>	<b>2007/08</b>	<b>2008/09</b>	<b>2009/10</b>	<b>2010/11</b>	<b>2011/12</b>
Դասախոսների թիվը	45	48	45	40	37
Ուսումնաօժանդակ կազմի աշխատողների թիվը	8	7	8	9	9
<b>Հարաբերակցությունը</b>	<b>5.63</b>	<b>6.86</b>	<b>5.63</b>	<b>4.44</b>	<b>4.11</b>

տեղերի ընտրության մրցույթի հստակ մեխանիզմ՝ սահմանված ՀՊՃՀ համապատասխան կարգով:

Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական հիմնական կազմը՝

Պրոֆեսոր- 2, դոցենտ- 9, ավագ դասախոս- 1, ասիստենտ- 6, դասախոս- 30:

Համատեղությամբ դասավանդողների կազմը՝

Ներքին համատեղությամբ՝

Պրոֆեսոր- 1, դոցենտ- 2, , ասիստենտ- 2, դասախոս- 3:


Արտաքին համատեղությամբ՝

Պրոֆեսոր- 1, դոցենտ- 2, , ասիստենտ- 2, դասախոս- 6:

Կախված դասավանդողների տարակարգից, կիրառվում է վճարման տարբերակված համակարգ, որը խթան է հանդիսանում ու նպաստում է դասավանդողների որակական կազմի բարելավմանը:

ՄՈՒՀ-ում կրթական ծրագրերի իրականացման հաջողությունը պայմանավորված է նաև այդ գործընթացում ներգրավված ուսումնաօժանդակ անձնակազմի արհեստավարժությամբ: ՄՈՒՀ-ում գործող ուսումնական լաբորատորիաների տեխնիկական հագեցվածությունից ոչ պակաս կարևոր է դրանցում ընդգրկված անձնակազմի բարձրորակ աշխատանքը: Ներգրավվում են երիտասարդ մասնագետներ, որոնց հնարավորություն է տրվում համատեղությամբ դասավանդելու, ու նրանց համար ստեղծվում են մասնագիտական աճն ու կատարելագործումը ապահովող պայմաններ:

**Դասախոսական կազմ /ուսումնաօժանդակ կազմ քանակական հարաբերակցությունը**



Հարաբերակցությունը մոտեցել է նախանշված 4:1 ցուցանիշին:



Ներկայումս ինչպես մասնաճյուղում, այնպես էլ ՀՊՃՀ-ում բացակայում են դասավանդողների խրախուսման քաղաքականությունը և ընթացակարգերը: Դրանց որոշումը անմիջականորոն կապված է ՀՊՃՀ-ում դասախոսի գործունեության արդյունավետության գնահատման համակարգի հետ, որ դեռևս գտնվում է մշակման փուլում:

ՈւՅ կազմի մասնագիտական որակների համապատասխանությունը մասնաճյուղի առաքելությանը և կրթական ծրագրերի նպատակներին որոշվում է նրանց մասնագիտական ուղղվածությամբ, ԲՈՒՀ-ում ստացած որակավորման աստիճանով և փորձառությամբ:

Կրթական ծրագրերի բարեփոխումներին և որակի ապահովման արդի պահանջներին համահունչ մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի բարելավման և համալրման ռազմավարության ուղղություններն են

- Իրականացնել դասախոսական առկա ներուժի գնահատում (հաշվառում)՝ ըստ արդի կրթական բարեփոխումների պահանջներին համապատասխանության:
- Համալսարանի ԴԿԿ-ի կողմից իրականացվող վերապատրաստման ու կատարելագործման ծրագրերի շրջանակներում մշակել և իրականացնել դասախոսական կազմի վերապատրաստման ու կատարելագործման հնգամյա ծրագիր:
- Մշակել և իրականացնել դասախոսական կազմի համալրման հեռանկարային ծրագիր՝ արդյունավետ օգտագործելով ՀՊՃՀ ասպիրանտուրան և սովորող նպատակային ասպիրանտներին ներգրավելով ուսումնական գործընթացում:
- Շարունակել աշխատանքները դասախոսական, վարչական, ուսումնաօժանդակ և սպասարկող կազմի քանակական ու որակական ցուցանիշների բարելավման ուղղությամբ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.Բ. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:**

Մասնաճյուղը կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ պրոֆեսորադասախոսական կազմ ձևավորելիս առաջնորդվում է ՀՊՃՀ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգով և համալրումը իրականացնում է տվյալ կրթական ծրագրի չափորոշիչներին համապատասխանող անհրաժեշտ որակավորումներ ունեցող դասախոսներով:

Ուսումնական բեռնվածքների բաշխման ընթացքում հաշվի է առնվում դասախոսների տարակարգը, գիտական գործունեության ուղղվածությունը, գիտամանկավարժական ստաժը՝ դասախոսությունների ժամեր տրվում են առաջին հերթին գիտական աստիճան և գիտական կոչում ունեցող անձանց, ու սահմանափակումներ կան բակալավրական կրթությամբ դասախոսների համար, ում ուսումնական բեռնվածք տրվում է բացառիկ դեպքերում՝ աստիճանակիր դասախոսների բացակայության դեպքում:

Մասնաճյուղը ՄԿԾ որակներին ներկայացվող պահանջներին համապատասխան ՊԴ կազմի ապահովման գործընթացում առաջնորդվում է ՌԾ – ում ամրագրված հետևյալ ուղղություններով.

- Հիմք ընդունելով ՀՊՃՀ-ում դասախոսների գիտամանկավարժական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների համակարգը և գնահատման ընթացակարգը՝ իրականացնել մասնաճյուղի դասախոսների գիտամանկավարժական գործունեության գնահատում և դրա արդյունքները հիմք ընդունել միջտարակարգային առաջընթացի ու աշխատավարձի բարձրացման համար:
- Մասնաճյուղում ապահովել դասավանդման արդյունավետության շարունակական բարձրացում և խրախուսել լավագույնը ճանաչված մանկավարժական-մեթոդական փորձ կիրառող դասախոսին (դասախոսներին):
- Խրախուսել դասախոսների ինքնակրթությունը և գիտական ու մանկավարժական շարժունությունը: Հնարավորինս ապահովել դասախոսների մասնակցությունը կրթության բնագավառում իրականացվող նորագույն ծրագրերին:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.9. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար**

Մասնաճյուղը դասախոսական կազմի պարբերաբար գնահատման քաղաքականությունը ամրագրել է իր 2012-16թթ.ռազմավարական ծրագրում որի հիմնական ուղղություններն են՝

- ՀՊՃՀ-ի կողմից մշակված դասախոսի գործունեության ամենամյա պարտադիր գնահատման համակարգի ներդնումից հետո ամենամյա գնահատման արդյունքների ամփոփման գործընթացը զուգակցել դասախոսական կազմի առաջքաշման և խրախուսման (պարգևատրման) գործընթացի հետ՝ սահմանելով «Մասնաճյուղի լավագույն դասախոս» ամենամյա մրցանակ:
- Մասնաճյուղի ուսանողական խորհրդի ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ մասնաճյուղում կազմակերպել ամենամյա սոցիոլոգիական ուսումնասիրություններ՝ ՀՊՃՀ-ում մշակված իրականացվող կրթական ծրագրերից ուսանողների բավարարվածության գնահատման չափանիշներով:

Մասնաճյուղում իրականացվում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի դասախոսությունների լուսմներ՝ ամբիոնի վարիչի կողմից: Ամբիոնի նիստերում կատարվում են քննարկումներ ու վերլուծություններ, արվում համապատասխան առաջարկություններ ֆակուլտետի ղեկավարությանը:

ՊԴ կազմի մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման գործիքներից մեկը կարելի է համարել <<Դասախոսը ուսանողի աչքերով>> սոցիոլոգիական հարցումը, որը օգտագործվում է դասախոսների ատեստավորման և մրցույթների ժամանակ: Իրականացվում է նաև դասախոսների տարեկան հաշվետվությունների քննարկում և գնահատում ամբիոններում, վեր են հանվում

դասասալսումների արդյունքները, որոնք էլ հիմք են հանդիսանում դասախոսների հետ պայմանագրերի կնքման և բեռնվածքների բաշխման ժամանակ: (Հավելվածի տեսքով ցույց տալ սոց հարցման թերթիկը, դասախոսի հաշվետվությունը, ամբիոնի նիստի արձանագրությունները):

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.Դ. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքների համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:**

Գիտատեխնիկական առաջընթացը, աշխատաշուկայի պահանջները պարբերաբար անհրաժեշտություն են առաջացնում կրթական ծրագրերում համապատասխան փոփոխություններ կատարելու, ինչն իր հերթին թելադրում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ իրականացնել: Մասնաճյուղը արդի կրթական պահանջներին համապատասխան դասախոսական կազմի համալրման և շարունակական բարելավման գործընթացում ամրագրել է ռազմավարության հետևյալ ուղղությունները.

- Իրականացնել դասախոսական առկա ներուժի գնահատում (հաշվառում)՝ ըստ արդի կրթական բարեփոխումների պահանջներին համապատասխանության:
- Համալսարանի ԴԿԿ-ի կողմից իրականացվող վերապատրաստման ու կատարելագործման ծրագրերի շրջանակներում մշակել և իրականացնել դասախոսական կազմի վերապատրաստման ու կատարելագործման հնգամյա ծրագիր:
- Մշակել և իրականացնել դասախոսական կազմի համալրման հեռանկարային ծրագիր՝ արդյունավետ օգտագործելով ՀՊՃՀ ասպիրանտուրան և սովորող նպատակային ասպիրանտներին ներգրավելով ուսումնական գործընթացում:

ՀՊՃՀ-ում կազմակերպվում է դասախոսների վերապատրաստման դասընթացներ՝ ԴԿԿ-ի (դասախոսների կատարելագործման կենտրոն) շրջանակներում և մասնաճյուղի դասախոսների վերապատրաստման համար մասնաճյուղում առկա է հեռատեսակապի արդիական միջոցները և ինտերնետային միջոցները (տարբեր մասնագիտությունների գծով գործող ֆորումները):

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.Ե. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունություն:**

Ելնելով առկա վիճակից, ինչպես նաև մասնաճյուղի ռազմավարական ծրագրով նախատեսված հիմնական ուղղություններից, աշխատանքներ են տարվում պրոֆեսորադասախոսական անձնակազմի կայունության ապահովման ուղղությամբ:

Ռազմավարության հիմնական ուղղություններն են.

- Պարբերաբար գնահատել մասնաճյուղի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը:

- Բարձրացնել աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը՝ շարունակաբար ընդլայնելով սոցիալական ծրագրերի տեսականին և պարբերաբար մեծացնելով սոցիալական ծրագրերին ու միջոցառումներին հատկացումների հաշվեկշիռը մասնաճյուղի բյուջեում:
- Իրականացնել ռազմավարական պլանավորում մասնաճյուղի գործունեության բոլոր բնագավառների համար, իրականացնել ուսանողական համակազմի, կադրային և տեղեկատվական ռեսուրսների, նյութատեխնիկական բազայի, ֆինանսական ռեսուրսների և աշխատանքի վարձատրության 2012-2016 թթ. պլանավորում:
- Բյուջետային համակարգի կատարելագործման ճանապարհով ապահովել ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ու թափանցիկ բաշխում և բոլոր բնագավառների կառավարման գործընթացների համաձայնեցում:
- Կայունացման և ռիսկերից ապահովագրման ֆոնդը պահպանել հնարավորինս բարձր մակարդակի վրա, լուծել անձնակազմի պահպանման և համալրման գերխնդիրը, ինչպես նաև ստեղծել աշխատողների սոցիալական օգնության և խրախուսման հնարավորություններ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.2. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգ**

ՀՊՃՀ-ում տարվող քաղաքականությունը և ընթացակարգերը համապատասխան են ՀՊՃՀ-ում ՊԴ կազմի ձևավորման կարգին: Դասախոսների և աշխատակիցների մասնագիտական առաջընթացին աջակցող միջոցներից է գիտական հայցորդների ինստիտուտը, ինչպես նաև ասպիրանտուրան և դոկտորանտուրան:

ՀՊՃՀ-ում գործող հայցորդների ինստիտուտի, ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի և աստիճանաշնորհման խորհուրդների միջոցով մասնաճյուղի 6 դասախոսներ հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ:

Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունն ամրագրված է 2012-16թթ, ՌԾ ՆՊԱՏԱԿ 3-ի, խնդիր 3.1-ում. այն է.

Մշակել և իրականացնել դասախոսական կազմի համալրման հեռանկարային ծրագիր՝ արդյունավետ օգտագործելով ՀՊՃՀ ասպիրանտուրան և սովորող նպատակային ասպիրանտներին ներգրավելով ուսումնական գործընթացում:

Մասնաճյուղում առկա ՊԴ կազմի 11 աստիճանակիր դասախոսներից 4-ը թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել հայցորդական ինստիտուտի, 2-ը՝ ՀՊՃՀ ասպիրանտուրայի միջոցով (2005-2009թթ. ընթացքում): Նրանցից 5-ը դոցենտի գիտական աստիճաններ են ստացել վերջին 3 տարում: Գիտական աստիճան ստացած 2 դասախոսներ 2011-12թթ. նշանակվել են վարչական պաշտոններում (հեռակա ուսուցման բաժանմունքի վարիչ և մասնաճյուղ տնօրենի տեղակալ ուսումնամեթոդական աշխատանքների գծով):


Վերը բերված տեղեկատվությունը հիմք է տալիս եզրահանգել, որ մասնաճյուղում կիրառվող ՊԴ կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը արդյունավետ են:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 5.1. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաստանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:**

Մասնաճյուղը անհրաժեշտ վարչական և ուսումնաստանդակ աշխատակազմ ապահովում է առաջնորդվելով ռազմավարության հիմնական ուղղություններից (ՌԾ Խնդիր 3.2.)


- Ուսումնական գործընթացը պլանավորելիս՝ հաշվի առնել դասախոսական հաստիքների օգտագործման արդյունավետության բարձրացումը:
- Շարունակել աշխատանքները դասախոսական, վարչական, ուսումնաստանդակ և սպասարկող կազմի քանակական ու որակական ցուցանիշների բարելավման ուղղությամբ:
- Պահանջմունքի դեպքում համալսարանի հնարավորությունների օգտագործմամբ կազմակերպել վարչակազմի կատարելագործման գործընթաց:
- Ապահովել դասախոսների մասնակցությունը մասնաճյուղի կառավարման գործընթացում:
- Ստեղծել մասնաճյուղի կառավարման համակարգի որակյալ և կայուն ռեզերվ:
- Նպաստել մասնաճյուղում կոլեկտիվ պատասխանատվության արմատավորմանը:

	2007/08	2008/09	2009/10	2010/11	2011/12
Դասախոսների թիվը	45	48	45	40	37
Վարչական կազմի աշխատակիցների թիվը	10	11	10	11	10
<b>Հարաբերակցությունը</b>	<b>4.50</b>	<b>4.36</b>	<b>4.50</b>	<b>3.64</b>	<b>3.70</b>



Հարաբերակցության վերջին տարիներից 4-ից փոքր ցուցանիշը պայմանավորված է դասախոսների թվի նվազումով:

	2007/08	2008/09	2009/10	2010/11	2011/12
Դասախոսական կազմի հաստիքների թիվը	37	36.75	33	31	28
Վարչական կազմի հաստիքների թիվը	15.5	16	15.5	10.5	10.5
<b>Հարաբերակցությունը</b>	2.39	2.30	2.13	2.95	2.67



Հարաբերակցության 4-ից բավական փոքր ցուցանիշը պայմանավորված է դասախոսական հաստիքների թվի կտրուկ նվազեցմամբ:

Ուսումնառության աշխատակազմի հիմնական գործառույթն է դասախոսներին օգնել իրականացնելու առարկայական ծրագրերին համապատասխան լաբորատոր աշխատանքների կատարմանը և օժանդակել ուսանողներին փորձերի կատարման և նախատեսված նյութի յուրացման հարցերում, ինչպես նաև մշտական հսկողություն իրականացնել, լաբորատորիաները ուսումնագիտական աշխատանքների կատարման համար նորմալ վիճակում պահելու նպատակով:

Վարչական և ուսումնառության աշխատակազմերի կայունության և գործունեության որակի ապահովման նպատակով իրականացվում է աշխատանքի համար անհրաժեշտ գործիքամիջոցներով ապահովում, ծագող խնդիրների լուծման ժամանակ մասնաճյուղի ղեկավարության կողմից արագ արձագանք և օժանդակություն:

Մշակված են փաստաթղթեր, որոնք կանոնակարգում են վարչական աշխատակիցների պաշտոնական պարտականությունները և ստորաբաժանումների գործունեության շրջանակները, որը քննարկման համար ներկայացվել է բոլոր ստորաբաժանումներին ու մասնաճյուղի ղեկավարությանը: Ընթացքի մեջ է ուսումնառության անձնակազմի պաշտոնական պարտականությունների մշակման գործընթացը:

Բացի ուսումնաստանդակ կազմից մասնաճյուղի աշխատանքներին մասնակցում են նաև տնտեսավարման և սպասարկող ոլորտի աշխատակիցներ, որոնք ապահովվում են մասնաշենքի մաքրությունը, ջեռուցումը, իրականացնում են էլեկտրականության անխափան ապահովումը:

Մասնաճյուղում արմատավորվում է թիմային աշխատանքի ոճ, որի դրական ազդեցությունը կատարվող աշխատանքի արդյունավետության ու որակի վրա արդեն տեսանելի է:

SWOT վերլուծություն	
Ուժեղ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>• Թիմային աշխատանք</li> <li>• Աստիճանակիր դասախոսների թվաքանակի աճի միտում</li> <li>• ՀՊՃՀ-ում բարձր դասախոսական աշխատավարձ:</li> </ul>
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>• ՊԴ կազմի ազատ ընտրության հնարավորության բացակայություն</li> <li>• Տեխնիկական կրթությամբ բարձրորակ մասնագետների և նրանց դպրոցների բացակայություն</li> <li>• Ոչ բոլոր մասնագիտությունների գծով գիտական աստիճան ունեցող ՊԴ կազմ</li> <li>• Համաշխարհային գիտակրթական համակարգում աննշան ինտեգրում</li> <li>• ՊԴ կազմի մասնագիտական վերապատրաստման հնարավորության բացակայություն</li> </ul>
Հնարավորություններ	<ul style="list-style-type: none"> <li>• Միջազգային համագործակցության շրջանակներում ՊԴ կազմի վերապատրաստման և զարգացման հնարավորություն</li> <li>• Արտադրական ձեռնարկությունների հետ գիտահետազոտական համագործակցության շրջանակներում ՊԴ կազմի գիտարտադրական փորձառության ձեռքբերման և զարգացման հնարավորություն:</li> </ul>
Վտանգներ	<ul style="list-style-type: none"> <li>• Տարածաշրջանի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողների աշխատավարձերի համեմատ մասնաճյուղի ՊԴ կազմի ցածր աշխատավարձի և Կապանում բուհական մտավորականության համար անբավարար սոցիալ-մշակութային պայմանների պատճառով երիտասարդ կադրերի արտահոսք դեպի այդ ձեռնարկությունները, Երևան և արտերկիր:</li> <li>• Վերապատրաստման հնարավորություն բացակայության պատճառով ՊԴ կազմի մասնագիտական մակարդակի տարեցտարի նվազում, գիտելիքների հնացում:</li> </ul>

## **ՉԱՓԱՆԻՇ 6 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ**

**ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:**

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.Ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:**

Մասնաճյուղի հետազոտությունների ռազմավարությունը ամրագրված է ՀՊՃՀ-ի և մասնաճյուղի 2012-2016 թթ. Ռազմավարական ծրագրում (ՄՊ): Այն համահունչ է ՀՀ գիտության ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրի հիմնական դրույթներին: Հետազոտությունների ուղղությունները համապատասխանում են տարածաշրջանում տեղաբաշխված արդյունաբերական ձեռնարկությունների ոլորտներին և հանրապետությունում գերակա հայտարարված հետևյալ ուղղություններին.


- Լեռնամետալուրգիա,
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- Ճյուղային տնտեսագիտություն,
- Կիրառական մաթեմատիկա և մեխանիկա,
- Շինարարություն:

Մասնաճյուղի ռազմավարության և հետազոտությունների ուղղությունների կապն արտացոլված է մասնաճյուղի Ռազմավարական ծրագրում և հրատարակված գիտական աշխատանքներում (ցանկը կցվում է), ինչպես նաև ներկայում իրականացվող տնտեսայմանագրային հետազոտական նախագծում:

Հետազոտական աշխատանքների արդյունքները վավերացվում են համապատասխան գիտական հոդվածներով և հաշվետվություններով, գիտաժողովներում ներկայացված զեկույցներով և ատենախոսությունների պաշտպանությամբ:

Մասնաճյուղում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը վերջին 5 տարիների ընթացքում աճել է: Դրա ապացույցն է գիտական ամսագրերում և գիտաժողովների ժողովածուներում հրապարակումների թվաքանակի աճը (տես դիագրամը) և <<ԶՊՄԿ>> ՓԲԸ-ի կողմից ֆինանսավորվող տնտեսայմանագրային թիվ 01-Գ/2010 <<Մոլիբդենային հանքանյութի ֆլոտացման տեխնոլոգիական գործընթացի հավանականային կառավարման նմանակային մոդելի մշակումը>> թեմայով հետազոտական նախագծի կատարումը (Հավելված 6.1):





Մասնաճյուղի աշխատակիցների կողմից հրապարակված գիտական աշխատանքների թվաքանակի դինամիկան

Վերը նշված դրական միտումների կայուն աճի պահպանմանն են ուղղված հետևյալ միջոցառումները.

1. ՀՊՃՀ-ում ընդունված դասախոսների հետազոտական գործունեության արդյունավետության գնահատման չափանիշները հաշվի առնել դասախոսների առաջընթացի գործընթացներում:
2. Ակտիվացնել մասնաճյուղի հետազոտական կապերը գործընկեր ձեռնարկությունների հետ և նրանց հետ իրականացնել համատեղ հետազոտություններ:
3. Ձևավորել մասնաճյուղի ինովացիոն խորհուրդ:
4. Աջակցել մասնաճյուղի գիտամանկավարժական կազմի ընդգրկմանը տարբեր գիտական նախագծերում, ապահովել անհրաժեշտ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն նախագծերի ֆինանսավորման միջազգային աղբյուրների որոնմանը և հայտերի մշակմանը:
5. Ապահովել մասնաճյուղի հնարավորինս մասնակցությունը ՀՊՃՀ-ում իրականացվող միջազգային գիտական ծրագրերում:
6. Խրախուսել արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում հոդվածների հրատարակումը և միջազգային ներկայացուցչական գիտաժողովներին մասնակցությունը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.Բ. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ուղղվածություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:**

Մասնաճյուղի միջնաժամկետ ծրագրերը նախատեսում են հետազոտությունների ոլորտում մասնաճյուղի հետաքրքրությունները և հավակնությունները ներկայացնող հանրապետական ու միջազգային գիտական նախագծերին մասնաճյուղի աշխատակիցների մասնակցությունը: Այդպիսի մի ծրագիր ներառում է «ՀՊՄԿ» ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ (տարեկան 9 մլն. դրամ) թիվ 01-Գ/2010 թեմայի կատարումը 01.01.2012-31.12.2013 ժամանակահատվածում: Նշված նախագծի իրականացումը վկայում է մասնաճյուղի գիտահետազոտական գործունեության ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների միջնաժամկետ ծրագրերի կատարման արդյունավետության աճի մասին:

Հետազոտական ոլորտում մասնաճյուղի հետաքրքրությունները ներկայացնող երկարաժամկետ ծրագրերը ներառվել են ՀՊՃՀ-ի կողմից 2008-2011 թթ ՀՀ Կ և Գ նախարարություն ներկայացված պետբյուջեից ֆինանսավորվող հետազոտական թեմաների հայտերի ընդհանուր փաթեթներում:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.Գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:**

Մասնաճյուղում առկա են հետազոտությունների իրականացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու հետևյալ մեխանիզմները.

1. Գիտական նախագծերի դրամաշնորհները:
2. Պետ. բյուջեից ֆինանսավորվող գիտական նախագծերը:
3. Արդյունաբերական ձեռնարկությունների կողմից ֆինանսավորվող տնտեսականագրային գիտահետազոտական նախագծերը:

Մասնաճյուղում հետազոտության և զարգացման նպատակով 2012 թ. հատկացվել է 3 մլն. դրամ (<<ՀՊՄԿ>> ՓԲԸ-ի կողմից՝ տնտեսականագրային նախագծի կատարման համար):

Մասնաճյուղում երիտասարդ աշխատակազմի հետազոտական գործունեությունը խրախուսելու քաղաքականությունը և ընթացակարգերը նույնն են, ինչ որ ողջ ՀՊՃՀ-ում և ներառում են.

- Երիտասարդ գիտնականներին միանվագ կրթաթոշակների հատկացումը արտերկրում հետազոտական աշխատանք կատարելու համար:
- Գիտական լավագույն աշխատանքների խրախուսման համար կազմակերպվող համալսարանական մրցույթները:
- Երիտասարդ գիտնականներին ժամանակին և արտոնյալ պայմաններով գիտական կոչումների շնորհումը:

Ակադեմիական ազնվությունը երաշխավորող և գրագողությունը կանխարգելող միջոցների քաղաքականությունը ներառում է մասնաճյուղի աշխատակիցների գիտական աշխատանքների կատարման վերահսկումը գիտական մասի կողմից, դրանց ներկայացումը ամբիոնների ու մասնաճյուղի սեմինարներում և երաշխավորումը տպագրության գրախոսվող ամսագրերում:

Մասնաճյուղում հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին նպաստող քաղաքականության արդյունավետությունը դեռևս ցածր է, իսկ ընթացակարգերը, բացառությամբ գիտական մրցույթների արդյունքների ամփոփման հստակ ընթացակարգի, բացակայում են:

Այս ոլորտում առկա թերությունները վերացնելու նպատակով նախատեսվում են հետևյալ միջոցառումները (ՍՊ նպատակ 7, խնդիրներ 7.1, 7.2)

- Մշակել մասնաճյուղի գիտական ներուժի զարգացման հեռանկարային հնգամյա պլան՝ ելնելով հետազոտական աշխատուժի մասնաճյուղի ներքին և արտաքին շուկայի պահանջմունքներից:
- Իրականացնել մասնաճյուղի գիտական հենքի առկա վիճակի վերլուծություն, ստեղծել համապատասխան տվյալների բազա և մշակել հենքի զարգացման փուլային ծրագիր:

- Ապահովել գիտական հետազոտությունների համար բավարար տեղեկատվական հենք:
- Մշակել մեխանիզմներ երիտասարդ գիտական կադրերի ներգրավման, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված դասախոսների նյութական խրախուսման համար: Խրախուսել երիտասարդ գիտական կադրեր պատրաստող գիտական ղեկավարներին:
- ՀՊՃՀ-ում դասախոսների հետազոտական գործունեության արդյունավետության գնահատման արդյունքները հաշվի առնել դասախոսների պաշտոնական առաջաշման գործընթացում:
- Մասնաճյուղի տարբեր պրոֆիլների գիտական ներուժի առավել արդյունավետ օգտագործման նպատակով խրախուսել համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացումը:
- Ակտիվացնել մասնաճյուղի ամբիոնների հետազոտական կապերը գործընկեր ձեռնարկությունների հետ և նրանց հետ իրականացնել համատեղ հետազոտություններ:
- Հիմնվելով հետազոտական պատվերների վրա՝ ձևավորել դրանց իրականացումն ապահովող հետազոտական խմբեր և ստեղծել անհրաժեշտ լաբորատորիաներ (համապատասխան ռեսուրսների դեպքում նաև գիտաարտադրական կենտրոն):
- Ինովացիոն նախագծերի մշակմանն ու հետազոտությունների արդյունքների մարքեթինգին և առևտրայնացմանն աջակցելու նպատակով ստեղծել մասնաճյուղի ինովացիոն խորհուրդ:
- Ձգտել տնտեսվարողների անմիջական պատվերով իրականացվող հետազոտական ծրագրերի հաշվեկշռի շարունակական ավելացմանը:
- Ներմուծել գիտական հետազոտությունների արդյունավետության գնահատման ֆինանսական հստակ չափանիշներ, մասնավորապես, համադրելով նախագծի տարեկան կատարողական ծախսերը՝ արդյունքում ստացված եկամուտների հետ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.Դ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:**

Մասնաճյուղի զարգացման թիրախներից մեկը միջազգային գիտական ծրագրերում մասնաճյուղի աշխատակիցների ներգրավումն է (ՄՊ նպատակ 7, խնդիր 7.3): Այս ոլորտի ռազմավարության հիմնական ուղղություններն են.

- Աջակցել մասնաճյուղի գիտամանկավարժական կազմի ընդգրկմանը տարբեր միջազգային գիտական նախագծերում, ապահովել անհրաժեշտ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն նախագծերի ֆինանսավորման միջազգային աղբյուրների որոնման և հայտերի մշակման գործընթացներում:
- Հնարավորինս ապահովել մասնաճյուղի մասնակցությունը ՀՊՃՀ-ում իրականացվող միջազգային գիտական ծրագրերում:
- Աջակցել ՀՊՃՀ միջազգային կապերի շրջանակներում դասախոսների գիտական գործուղումներին և ստաժավորմանը:

- Խրախուսել արտասահմանյան բարձր վարկանիշ ունեցող գիտական հանդեսներում հոդվածների հրատարակումը և միջազգային ներկայացուցչական գիտաժողովներին մասնակցությունը:
- Աջակցել դասախոսներին ազատ օգտվելու հանրապետական և միջազգային գիտատեղեկատվական ցանցերից ու հաշվողական ռեսուրսներից (կլաստերներից)՝ օգտագործելով նաև ՀՊՃՀ հնարավորությունները:

Մասնաճյուղում դեռևս բացակայում է միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը խրախուսող կանոնակարգ: Չնայած դրան, մասնաճյուղի դասախոսական կազմը հնարավորինս գործուն մասնակցություն է ունենում միջազգային հետազոտական ծրագրերում (2001-2003 թթ) և գիտական հոդվածներ հրապարակում ԱՊՀ և այլ միջազգային գրախոսվող ամսագրերում:

ԱՊՀ երկրներում և միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումներին նախորդում է մասնաճյուղի գիտական սեմինարներում դրանց քննարկումը և երաշխավորումը հրատարակության:

Միջազգային (ԱՊՀ և օտարերկրյա) գրախոսվող ամսագրերում հրապարակումների ցանկը:

### ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշ	2007	2008	2009	2010	2011
1	Известия Томского политехнического университета (ՌԴ)						1
2	Աշխարհի շուրջը (Գլենդել, ԱՄՆ)			1			

### Օտարերկրյա միջազգային գրախոսվող ամսագրերում հրապարակումների ցանկ

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշ	2007	2008	2009	2010	2011
1	Հանդես (Իրան)			1	1		
2	Journal Food and Enviroment Safaty of the Suceava University (Ռումինիա)						1

### ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշ	2007	2008	2009	2010	2011
1	Մանկավարժություն		1				
2	Գարուն		1			1	1
3	Էջմիածին		2	1			
4	Կանթեղ		1				
5	Գրականագիտական հանդես		1				
6	Համատեքստ		2	2			

7	Вестник ГИУА. Моделирование, оптимизация, управление		1	2		1	
8	ՀՀ ԳԱԱ և ՀՊՃՀ տեղեկագիր		1	1		2	
9	Вестник ГИУА (Լրաբեր ՀՊՃՀ)		2		3	2	4
10	Նարցիս				2	1	1
11	Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում			1			1
12	Ֆինանսներ և էկոնոմիկա			1			1
13	Շրջանակ			5	8		7
14	ՀՃԱ ԼՐԱԲԵՐ		1			2	1
15	Հայաստանի շինարարների տեղեկագիր				1	1	
16	Բնագետ						
17	Известия ЕрГУАЦ				1		
18	Մաթեմատիկական դպրոցում						1

Մասնաճյուղի հետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականության արդյունավետության բարձրացման մասին են վկայում վերջին տարիներին ԱՊՀ և օտարերկրյա գրախոսվող մասնագիտական ամսագրերում մասնաճյուղի աշխատակիցների հրապարակումները (տես ցանկը), ինչպես նաև ստորև բերված միջազգային գիտաժողովներին նրանց մասնակցությունը.

- Simulation 2010, (Կիև),
- “Технология и техника автоматизации”-2008, 2009 (Երևան),
- <<Բարձր-ջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզ>> 2009թ. (Ծաղկաձոր),
- <<Ճարտարապետության և շինարարության արդիական հիմունքներ>>, 2010թ. (Երևան) :

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 6.Ե. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:**

Մասնաճյուղում հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելուն ուղղված քաղաքականությունը, մեթոդները և ընթացակարգերը դրսևորվում է հետևյալում.

1. Ուսանողների ներգրավում ՈւԳԸ-ում և մասնակցությունը մասնաճյուղի գիտական սեմինարներին:
2. Ուսանողների ներգրավում գիտահետազոտական աշխատանքներում, օրինակ. <<ԶՊՄԿ>> ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ կատարվող հետազոտական նախագծում ընդգրկվել էին ԿՀ 71 խմբի 3 ուսանող (1-ը վճարովի, 2-ը՝ հասարակական հիմունքներով) (տես հավելված 6.1):
3. Մասնագիտական դասընթացներում, ուսանողների ավարտական աշխատանքներում դասախոսների ատենախոսությունների և գիտական աշխատանքների արդյունքների կիրառում:
4. Ուսանողների համահեղինակությամբ գիտական հոդվածների հրապարակում (վերջին 5 տարում բացակայում են):

Գործընթացի բարելավմանն ուղղված միջոցառումներն են.

1. Ուսանողների ներգրավումը ուսանողական գիտական ընկերությունում:
2. Դասախոսների ատենախոսությունների և գիտական աշխատանքների արդյունքների ներդրումը ուսումնական գործընթացում (դասախոսություններում, կուրսային աշխատանքներում և նախագծերում, ավարտական աշխատանքներում):
3. Ուսանողական տարեկան գիտաժողովների անցկացում և լավագույն աշխատանքների հեղինակների խրախուսում:
4. Ուսանողների լայն ընդգրկում դասախոսների կողմից իրականացվող հետազոտություններում:
5. Ուսանողների գիտական աշխատանքների ղեկավարման համար ուսումնական բեռնվածքում ժամերի հատկացում (1 ուսանողի հաշվարկով 20-50 ժ.):

Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումը արտահայտող հիմքերն են.

1. <<ԶՊՄԿ>> ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ իրականացվող թիվ 01-Գ/2010 <<Մոլիբդենային հանքանյութի ֆլոտացման տեխնոլոգիական գործընթացի հավանականային կառավարման նմանակային մոդելի մշակումը>> նախագծի աշխատանքներում ընդգրկվել էին <<Տեղեկատվական տեխնոլոգիաներ>> մասնագիտության ԿՀ 81 խմբի 3 ուսանող (հավելված 6.1), որոնց ավարտական աշխատանքներում կիրառվել են նախագծի գիտական արդյունքները: Նույն նախագծում ներկայումս ընդգրկված են ԿՀ 91 խմբի 2 ուսանող:
2. Ընդերքաբանության և մետալուրգիայի ամբիոնի 4 ուսանողի ավարտական աշխատանքում կիրառվել են ամբիոնի 2 դոցենտի ատենախոսությունների արդյունքները:
3. ԼՄՁՏ և Կ ամբիոնի 3 ուսանողի ավարտական աշխատանքներում կիրառվել են ամբիոնի 3 դասախոսի գիտական աշխատանքների արդյունքները:

#### Օրինակ 1

ԿՀ 81 խմբի ուսանողներ Մ.Կ. Թադևոսյանի (ավ. աշխ.-ի թեման՝ <<Ուսալիության հաշվառմամբ հանքաքարի մանրացման տեխնոլոգիական համակարգի նմանակային մոդելի կառուցումը LabVIEW միջավայրում>>), Հ. Կ. Մկրտչյան (ԱԱ-ի թեման՝ <<Մոլիբդենային հանքանյութի ֆլոտացման տեխնոլոգիական գործընթացի հավանականային կառավարման մոդելի մշակում>>), Ա. Կ. Սողոմոնյանի (ԱԱ-ի թեման՝ <<Հանքաքարի մանրացման տեխնոլոգիական համակարգի տարրերի աշխատունակության փոփոխության գործընթացի նմանակային մոդելի մշակումը LabVIEW միջավայրում>>), Վ.Ս. Թովմասյանի (ԱԱ-ի թեման՝ <<Պղնձամոլիբդենային հանքանյութի ֆլոտացման գործընթացի մաթեմատիկական մոդելի փոփոխականների կազմի որոշումը փորձագիտական գնահատման մեթոդով>>) բակալավրական ավարտական աշխատանքներում կիրառվել են թիվ 01-Գ/2010 տնտայամանագրային գիտահետազոտական նախագծի առաջին և երկրորդ փուլերի արդյունքները:

Օրինակ 2

ԿՀ 91 խմբի ուսանողներ Դ. Ի. Այվազյանի (ԱԱ-ի թեման՝ «Բարդ տեխնոլոգիական համակարգերում տարրերի լծորդման քումփյութերային մոդելի մշակում») և Ռ.Ա. Հովսեփյանի (ԱԱ-ի թեման՝ «Տեխնոլոգիական գործընթացի օպտիմալ կառավարման ալգորիթմի մշակում հնարավոր բոլոր տարբերակների դիտարկման մեթոդով») ավարտական աշխատանքներում օգտագործվել են դոցենտ Ա.Շ. Բալասանյանի գիտական հետազոտությունների արդյունքները:

Օրինակ 3

ԿՏ 64 խմբի ուսանող Ա. Փարամազյանի (ԱԱ-ի թեման՝ «ԴԳՄՔ ՓԲԸ տեխնիկատնտեսական ցուցանիշների բարելավման ուղիները») և ԿՏ 74 խմբի ուսանող Մ. Սանոյանի (ԱԱ-ի թեման՝ «Բեյզ Մեթրիզ» ՓԲԸ-ի շահույթի և շահութաբերության վերլուծություն») ավարտական աշխատանքներում օգտագործվել են դասախոս Լ. Եղիազարյանի գիտական աշխատանքների արդյունքները:

Օրինակ 4

ԿՏ 94 խմբի ուսանող Օ. Մարգարյանի (ԱԱ-ի թեման՝ «Դրամական հոսքերի օպտիմալ կառավարումը «ՀՊՄԿ» ՓԲԸ օրինակով») ավարտական աշխատանքում կիրառվել են դասախոս Ա. Հայրապետյանի գիտական աշխատանքների արդյունքները:

Օրինակ 5

ԿՆ 93 խմբի ուսանող Ա. Ներսիսյանի (ԱԱ-ի թեման՝ «Մարտկոցային ջարդոնափոշուց կապարի ռաֆինացման տեխնոլոգիայի մշակումը և 15000 տ/տարի արտադրողականությամբ արտադրամասի շահագործման կազմակերպում») ավարտական աշխատանքում օգտագործվել են դոց. Ա. Աղայանի գիտական հետազոտությունների արդյունքները:

Օրինակ 6

ԿՆ 93 խմբի ուսանող Յ. Մարտիրոսյանի (ԱԱ-ի թեման՝ «Ցինկային խտանյութից հիդրոմետալուրգիական եղանակով մաքուր ցինկի ստացման տեխնոլոգիայի մշակումը և 24000 տ/տարի արտադրողականությամբ արտադրամասի շահագործման կազմակերպում») ավարտական աշխատանքում օգտագործվել են դոց. Թ. Ավազյանի գիտական աշխատանքների արդյունքները:

**SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՉԱՓԱՆԻՇ 6-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՎԵՐՋԻՆ 5 ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ)**

SWOT վերլուծություն	
Ուժեղ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>• Լեռնամետալուրգիական ոլորտի արդյունաբերական ձեռնարկությունների առկայությունը Սյունիքի մարզում, որոնցից խոշորագույնի՝ «ՀՊՄԿ» ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ մասնաճյուղն իրականացնում է գիտահետազոտական նախագիծ:</li> <li>• Արդյունաբերական ձեռնարկությունների գործարանային լաբորատորիաների առկայություն, որոնք մասնաճյուղի աշխատակիցների կողմից կարող են օգտագործվել</li> </ul>

	<p>գիտահետազոտական նպատակներով:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Գիտական գործունեությունը համակարգող մասնաճյուղային կառույցի (գիտական մասի, գիտական աշխատանքների գծով փոխտնօրենի) առկայություն:</li> </ul>
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>• Սակավաթիվ բարձրորակ մասնագետներ:</li> <li>• Պետբյուջետային թեմաների ֆինանսավորման անբավարար ծավալներ:</li> <li>• Պետբյուջետային միջոցներով ֆինանսավորվող բազային լաբորատորիաների բացակայություն:</li> <li>• Դասախոսների և ուսանողների մոտ գիտական գործունեություն իրականացնելու մոտիվացիայի բացակայություն:</li> <li>• Մասնագիտական խորհուրդների բացակայություն:</li> <li>• Երևանյան բուհերի դասախոսների համեմատ ասպիրանտուրայի ընդունելության նպատակով օտար լեզվի քննություններին պատրաստվելու ցածր հնարավորություն:</li> <li>• Միջազգային գիտաժողովներին մասնակցելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայություն:</li> <li>• Նպատակային ասպիրանտական տեղերի բացակայություն: Վերոնշյալ գործընթացներից բավարարված են մոտավորապես ուսանողների 20 %-ը, դասախոսների 30 %-ը և գործատուների 40 %-ը:</li> </ul>
Հնարավորություններ	<ul style="list-style-type: none"> <li>• Միջազգային և պետական դրամաշնորհային ֆինանսավորման հնարավորություն:</li> <li>• Միջազգային գիտաժողովներին online մասնակցելու հնարավորություն POLYCOM 7000 տեսահեռակապի սարքի միջոցով:</li> <li>• Արդյունաբերական ձեռնարկությունների ֆինանսավորմամբ գիտահետազոտական նախագծեր կատարելու հնարավորություն:</li> <li>• Լեռնահանքային ոլորտի ձեռնարկություններում համատեղ հետազոտական լաբորատորիաներ ստեղծելու հնարավորություն:</li> <li>• Գիտահետազոտական գործունեության արդյունքները լեռնահանքային ոլորտի ձեռնարկություններում ներդնելու և առևտրայնացնելու (կոմերցիալիզացիա) հնարավորություն:</li> </ul>
Վտանգներ	<ul style="list-style-type: none"> <li>• Գիտական կադրերի ծերացում</li> <li>• Մասնաճյուղում համեմատաբար ցածր աշխատավարձի և Կապանում սոցիալ-մշակույթային անբավարար պայմանների պատճառով երիտասարդ գիտական կադրերի արտահոսք:</li> </ul>



	<ul style="list-style-type: none"> <li>• Գիտական աստիճան, կոչում ունեցող դասախոսների սակավաթվության պատճառով որոշ մասնագիտությունների հավատարմագրման դժվարություն:</li> </ul>
--	---

Մասնաճյուղում գործող հետազոտական գործունեության (<Գ) և ուսումնական գործընթացի (ՈւԳ) փոխկապակցման մեխանիզմների արդյունավետության վերլուծությունը ցույց է տալիս, որ

1. Մասնաճյուղում բացակայում են <Գ և ՈւԳ փոխկապակցության հստակ մշակված ընթացակարգեր, որոնք պարտավորեցնեն դասախոսներին ապահովելու <Գ և ՈւԳ փոխկապակցումը:
2. Բավականին արդյունավետ են <Գ և ՈւԳ փոխկապակցման ապահովումը ուսանողներին գիտահետազոտական, հատկապես տնտայայմանագրային նախագծերում ընդգրկումը, որտեղ ուսանողները կատարած աշխատանքի դիմաց վճարվում են:
3. Արդյունավետ կարելի է համարել դասախոսների գիտական աշխատանքների արդյունքների կիրառությամբ բակալավրական և մագիստրոսական աշխատանքների կատարման միջոցով <Գ և ՈւԳ փոխկապակցումը:
4. Բարձր է նաև ՈւԳԸ-ի միջոցով ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, ինչը մասնաճյուղում դեռևս լայն կիրառություն չի գտել ուսանողների պասիվության պատճառով:

SWOT վերլուծության արդյունքում բացահայտված թույլ կողմերի ուժեղացման և վտանգներին դիմակայելու նպատակներով ծրագրվել են հետևյալ միջոցառումները (ՍՊ նպատակ 7).

1. Մասնաճյուղի գիտական ներուժի զարգացման հնգամյա պլանի մշակում, համապատասխան տվյալների բազայի ստեղծում և դրա զարգացման փուլային ծրագրի մշակում:
2. Երիտասարդ գիտական կադրերի հավաքագրման և հետազոտական աշխատանքներում ներգրավված դասախոսների նյութական խրախուսման մեխանիզմների մշակում:
3. Դասախոսների հետազոտական գործունեության արդյունավետության հստակ չափանիշների մշակում և դրանց հաշվառում նրանց առաջընթացման գործընթացում:
4. Ինովացիոն նախագծերի մշակմանն ու հետազոտությունների արդյունքների մարքեթինգին և առևտրայնացմանն աջակցելու նպատակով մասնաճյուղային ինովացիոն խորհրդի կազմավորում:
5. ՀՊՃՀ ասպիրանտուրայում մասնաճյուղի շրջանավարտների համար նպատակային տեղերի հատկացում:
6. Մասնաճյուղում ՀՊՃՀ-ում գործող բազային լաբորատորիաների մասնաճյուղերի ստեղծում:
7. Միջազգային գիտական նախագծերում մասնաճյուղի դասախոսական կազմի կողմից հայտերի կազմման և նրանց ընդգրկման խորհրդատվական աջակցության կազմակերպում:

8. Միջազգային բարձր վարկանիշ ունեցող հանդեսներում հոդվածների հրատարակման և միջազգային գիտաժողովներին մասնակցության խրախուսում:

## **ՉԱՓԱՆԻՇ 7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ**

**ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:**

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.Ա. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր**

ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) Կապանի մասնաճյուղը գտնվում է Կապան քաղաքի հարավ արևելյան հատվածում (ընդհանուր տարածքը՝ 7288,7 ք.մ), Գ.Արզումանյան 11 հասցեում և բաղկացած է գլխավոր և երկրորդ ուսումնական մասնաշենքերից, հանրակացարանի ու ճաշարանի մասնաշենքերից և նրանց հետ փոխկապակցված շինություններից՝ կաթսայատուն, էլ. ենթակայան:

Գլխավոր ուսումնական մասնաշենքը (2735.8 ք.մ մակերեսով) օգտագործվում է ուսումնական գործընթացի կազմակերպման նպատակով, ինչպես նաև այս մասնաշենքում են տեղաբաշխված վարչակառավարչական կազմի աշխատասենյակները (հավելված 7.1) և մարզադահլիճը (967.6 ք.մ մակերեսով):

Երկրորդ մասնաշենքը (1202.1 ք.մ մակերեսով) նույնպես օգտագործվում է ուսումնական գործընթացի կազմակերպման նպատակով, ինչպես նաև այնտեղ է տեղաբաշխված մասնաճյուղի արհեստանոցը, դահլիճը, պահեստը և արխիվը:

Հանրակացարանի մասնաշենքը (1773.5 ք.մ մակերեսով) դարաբաղյան հակամարտության տարիներին տրամադրվել է փախստականներին, զինվորականներին, թեև 2010թ. տարածքը ազատվել է, սակայն գտնվում է անմխիթար և օգտագործման համար ոչ պիտանի վիճակում:

Ճաշարանի մասնաշենքը (561.4 ք.մ մակերեսով) գտնվում է վերանորոգման փուլում:

Գրադարանը տեղաբաշխված գլխավոր ուսումնական մասնաշենքում և զբաղեցնում է (176 ք.մ մակերես):

Մասնաճյուղի 2012-16թթ.ՌԾ ամրագրված են ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազա ապահովելու նպատակներն ու խնդիրները:

Ռազմավարության հիմնական ուղղություններն են


- Մարզադահլիճի և գլխավոր ուսումնական մասնաշենքի գրունտային ջրերի մակարդակը իջեցնելու նպատակով իրականացնել ցամաքուրդի նախագծման և կառուցման աշխատանքներ:
- Ապահովել ուսումնական մասնաշենքերի և ճաշարանի հարակից տարածքների լուսավորվածությունը:

- Ձևավորել և իրականացնել ուսումնական երկրորդ մասնաշենքի, մարզադահլիճի և հարակից մարզահրապարակի, հանրակացարանի մասնաշենքի հիմնանորոգման փուլային ծրագիր:
- Ավարտել ճաշարանի հիմնանորոգման աշխատանքները և ձեռք բերել անհրաժեշտ գույք ու խոհանոցային սարքավորումներ:
- Իրականացնել լսարանային ֆոնդի բարելավում և ուսումնական գույքի արդիականացում:
- Ապահովել ուսումնական և օժանդակ տարածքների առավել արդյունավետ օգտագործումը՝ վերաբաշխելով տարածքները զարգացման գերակայություններին համապատասխան:
- Իրականացնել մասնաճյուղի գրադարանային ռեսուրսների վիճակի ուսումնասիրությունը և գույքագրումը ու որոշել հետագա զարգացման (ձեռք բերման, մշակման) առաջնահերթությունները:

Մասնաճյուղի 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրով նախատեսված է իրականացնել մարզադահլիճի և նրա հարակից մարզահրապարակի, երկրորդ ուսումնական մասնաշենքի, հանրակացարանի հիմնանորոգում, լսարանային ֆոնդի բարելավում և ուսումնական գույքի արդիականացում, ինչպես նաև ճաշարանի մասնաշենքի վեներանորոգման ավարտ և գործարկում: Նշված խնդիրները նախատեսված է իրականացնել սեփական միջոցների և գործընկեր կազմակերպությունների, նվիրատուների աջակցությամբ: Հանրակացարանի հիմնանորոգումից և համապատասխան կահավորումից հետո առաջինից երրորդ հարկերը կձառայեն ուսումնական և վարչական նպատակներով, իսկ չորրորդ հարկը կձառայի ոչ կապանաբնակ ուսանողների համար որպես հանրակացարան:

Մասնաճյուղում ուսանողների շրջանում պարբերաբար անցկացվող սոցիալոգումների միջոցով գնահատվում են մասնաճյուղի ուսումնական ռեսուրսների վիճակը: Օրինակ՝ 2011-12 ուստարում ուսանողների շրջանում անցկացված սոցիալոգուման արդյունքում ուսումնական ռեսուրսները՝ ուսումնական և համակարգչային լսարանների, լաբորատորիաների, գրադարանի վիճակը և կահավորանքը գնահատվել է հետևյալ կերպ.

	դժկարևուն են այստախմանել	մոտավորապես	մոտավոր	լավ	ցերեպանց
Ուսումնական և համակարգչային լսարանների, լաբորատորիաների վիճակը և կահավորանքը	18	49	51	67	40
Գրադարանի վիճակը և կահավորանքը, աշխատանքի ռեժիմը, սպասարկումը, ջեռուցման համակարգը	31	76	84	116	68



Մասնաճյուղի 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրով նախատեսված է իրականացնել ուսումնագիտական բազայի վիճակի գնահատում և դրանց փուլային արդիականացման իրականացում, աշխատանքներ տանել արտադրական գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ հետազոտական լաբորատորիաների (կենտրոնների) ստեղծման ուղղությամբ, ինչպես նաև ՀՊՃՀ աջակցությամբ իրականացնել միջազգային դրամաշնորհների և ծրագրերի միջոցներով առկա լաբորատոր բազայի վերագինում և նորերի ստեղծում:

Մասնաճյուղի 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրով նախատեսված է իրականացնել մասնաճյուղի գրադարանային ռեսուրսների վիճակի ուսումնասիրություն, գույքագրում և հետագա զարգացման իրականացում: Ինչպես նաև նախատեսված է ձևավորել էլեկտրոնային ընթերցասրահ և ապահովել 6 համակարգիչներով:

Մասնաճյուղը ապահովված է օպտիկամանրաթելային ինտերնետ կապով, այժմ մասնաշենքի մի մասում ապահովված է wifi կապով (2013թ. նախատեսված է ապահովել ուսումնական մասնաշենքերի ողջ տարածքը): Մասնաճյուղի համար հասանելի են ՀՊՃՀ կայքի case փաթեթները և այլ տեղեկատվական ռեսուրսներ:

Մասնաճյուղի 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրով նախատեսված է իրականացնել մասնաճյուղի էլեկտրոնային ռեսուրսների վիճակի ուսումնասիրություն գույքագրում, դրանց զարգացման ծրագրի իրականացում, ինչպես նաև արտաքին և ներքին ռեսուրսների մատչելիության շարունակաբար ընդլայնում և օգտագործման արդյունավետության բարձրացում, ինտերնետ տեղեկատվական ռեսուրսների օգտագործման տեխնոլոգիական և տեխնիկական գործիքամիջոցների ընդլայնում, մասնաճյուղի կոմպյուտերային ցանցի զարգացում:

Մասնաճյուղում գործում է տեխնոլոգիական կարողությամբ և հեռաուսուցման 2 լսարան: Մասնաճյուղի 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրով նախատեսվում է ընդլայնել և արդիականացնել այդ լսարանների ցանցը, ինչպես նաև մասնաճյուղում ներդնել ՀՊՃՀ- ում մշակվող էլեկտրոնային (online) եղանակով ուսուցման դասընթացները (հնարավորության դեպքում ստեղծել նման դասընթացներ), զարգացնել կիրառվող վիրտուալ լաբորատոր փորձերը:

Մասնաճյուղի 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույցով հստակ նշված միջոցառումների իրականացման ժամկետները և պատասխանատուները:

Ռեսուրսներով ապահովվածության վերլուծությունը 2007-2011 թ. կտրվածքով բերված է մասնաճյուղի 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրի հավելված 7.1-ում:

Մասնաճյուղի ներկա ռեսուրսաապահովվածությունը կարելի է գնահատել բավարար և համապատասխանող որակավորումների շրջանակին:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.Բ. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովվելու ու գործարկելու համար:**

Մասնաճյուղն իր ֆինանսական ռեսուրսներն ուղղում է կանոնադրական և ռազմավարական խնդիրների իրականացմանը, սոցիալական և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումների կատարմանը: Ֆինանսական ռեսուրսների գոյացման աղբյուրներն են ՀՀ պետական բյուջեից հատկացումները, ՀՀ օրենսդրությամբ չարգելված և ՀՊՃՀ ու մասնաճյուղի կանոնադրություններով թույլատրված ձեռնարկատիրական գործունեության արդյունքում գոյացած միջոցները, ինչպես նաև իրավաբանական ու ֆիզիկական անձանց կատարած նվիրատվությունները, բարեգործական և հովանավորչական նպատակային մուծումները: Մասնաճյուղն իր ֆինանսական ռեսուրսները տնօրինում է համաձայն ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ) ՊՈԱԿ Կապանի մասնաճյուղի կանոնադրությունում բերված ընթացակարգի:

Մասնաճյուղը յուրանքյուր տարվա սկզբին կազմում է իր տարեկան նախահաշիվը: Մուտքերի մասով դրանք բաժանվում են երկու հիմնական մասի:

1. Մուտքեր պետական բյուջեից
2. Մուտքեր այլ անձանցից

1.Մուտքեր պետական բյուջեից հողվածը իր հերթին բաշխվում է հետևյալ հիմնական ուղղությունների

- Ուսման վճար
- Կրթաթոշակ
- Գիտական թեմաների ֆինանսավորում
- Հանրակրթական ուսուցման ֆինանսավորում

2007-2011թթ-ին պետական բյուջեի ֆինանսավորման մեջ ունեցել է հետևյալ կառուցվածքը՝

Աղյուսակ 7.1

Տարի	2007	2008	2009	2010	2011
Մուտքեր պետական բյուջեից	26.72	30.10	30.19	30.71	26.91
այդ թվում՝					
Ուսման վճար	71.90	76.57	79.93	82.06	83.18
Կրթաթոշակ	28.10	23.43	20.07	17.94	16.82


Մուտքեր այլ անձանցից հողվածը ներառում է աղյուսակ 2-ում բերված ծախսային հողվածները: Ստորև բերված է այս հողվածի կառուցվածքային ցուցանիշները 2007-2011 թթ-ին ընդհանուր նախահաշվում և դրանում ներառված ենթահողվածների այդ կառուցվածքային տվյալները՝ տվյալ հողվածում:

Աղյուսակ 7.2

Եկամտի անվանումը		2007	2008	2009	2010	2011
Այլ անձանցից	նախահաշիվ	73.28	69.90	69.81	69.29	73.09
	կատարողակ.	73.28	69.90	69.81	69.29	73.09
Այդ թվում						
վճարովի ուսուցում (հիմնական)	նախահաշիվ	84.55	97.93	97.31	97.59	93.43
	կատարողակ.	84.55	97.93	97.31	97.59	93.43
վճարովի ծառայություններ	նախահաշիվ	6.91	0.00	0.00	0.00	4.08
	կատարողակ.	6.91	0.00	0.00	0.00	4.08
այլ աղբյուրներ	նախահաշիվ	8.54	2.07	2.69	2.41	2.49
	կատարողակ.	8.54	2.07	2.69	2.41	2.49

Եկամտի անվանումը		2007	2008	2009	2010	2011	
2	ԸՆԹ. տարվա	նախահաշիվ	100.00	100.00	100.00	100.00	100.00
		կատարողակ	100	100	100	100	100
		կատարողակ.%	100	100	100	100	100
2.1	Բյուջեից.այդ թվում	նախահաշիվ	26.72	30.10	30.19	30.71	26.91
		կատարողակ	26.72	30.10	30.19	30.71	26.91
		կատարողակ.%	100	100	100	100	100
2.1.1	Ուսման վարձ	նախահաշիվ	19.21	23.05	24.13	25.20	22.38
		կատարողակ	19.21	23.05	24.13	25.20	22.38
		կատարողակ.%	100	100	100	100	100
2.1.1ա	Այդ թվում						
2.1.2.	Կրթաթոշակ	նախահաշիվ	7.51	7.05	6.06	5.51	4.53
		կատարողակ	7.51	7.05	6.06	5.51	4.53
		կատարողակ.%	100	100	100	100	100
2.2	Այլ անձանցից	նախահաշիվ	73.28	69.90	69.81	69.29	73.09
		կատարողակ	73.28	69.90	69.81	69.29	73.09
		կատարողակ.%	100	100	100	100	100
2.2.1	Վճարովի ուսուցում	նախահաշիվ	61.96	68.45	67.93	67.62	68.29
		կատարողակ	61.96	68.45	67.93	67.62	68.29
		կատարողակ.%	100	100	100	100	100
2.2.2	Վճարովի	նախահաշիվ	5.06	0.00	0.00	0.00	2.98
		կատարողակ	5.06	0.00	0.00	0.00	2.98
		կատարողակ.%	100	100	100	100	100
2.2.3	Այլ աղբյուրներ	նախահաշիվ	6.26	1.45	1.87	1.67	1.82
		կատարողակ	6.26	1.45	1.87	1.67	1.82
		կատարողակ.%	100	100	100	100	100

Բյուջետային մուտքեր (ըստ աղբյուրների հաշվեկշիռը),%	2007	2008	2009	2010	2011
Ուսման վարձեր	71,90	76,57	79,93	82,06	83,18
Պետական կրթաթոշակ	28,10	23,43	20,07	17,94	16,82
Թեմատիկ գիտական ֆինանսավորում					
Այլ մուտքեր					
<b>Ընդամենը՝ բյուջետային մուտքեր</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>	<b>100</b>



Բյուջետային մուտքերը ձևավորվում են միայն ուսման վարձից և կրթաթոշակից:

Մասնաճյուղի պահպանման և զարգացման, աշխատողների սոցիալական երաշխիքների հիմնական աղբյուրը շարունակում է մնալ մասնաճյուղի արտաբյուջետային գործունեությունը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.9. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն**

Մասնաճյուղի կրթական նպատակների իրականացման համար ֆինանսական միջոցները կառավարելու և դրանք նպատակներին համապատասխան բաշխելու մեխանիզմները հետևյալն են՝

- Տարեկան նախահաշվի պլանավորումը կատարվում է մասնաճյուղի գործունեության բոլոր բնագավառներում, հիմնվելով ուսանողական

համակազմի, կադրային և տեղեկատվական ռեսուրսների, նյութատեխնիկական բազայի վրա:

- Բյուջետային համակարգի կատարելագործման ճանապարհով ապահովվում է ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ու թափանցիկ բաշխումը և բոլոր բնագավառների կառավարման գործընթացների համաձայնեցումը:
- Սահմանվում է կողմնորոշիչ համամասնություններ մասնաճյուղի զարգացմանը, աշխատանքի վարձատրությանը և ինֆրակառուցվածքի պահպանմանն ուղղված միջոցների ծավալների միջև:

Ֆինանսական միջոցների համապատասխան մասնաճյուղի գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականությունը իրականացվում է հետևյալ կերպ.

- շարունակաբար զարգացնում է մասնաճյուղի մատուցվող ծառայությունների և իրականացվող ծրագրերի շուկայավարման ու առևտրայնացման քաղաքականությունը՝ կրթական, գիտահետազոտական և հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտում:
- Ընդլայնում է մասնաճյուղի վճարովի ծառայությունների տեսականին և ծավալները, բարձրացնում այդ ծառայությունների եկամտաբերությունը մեծացնելով դրանցից ստացվող ֆինանսական միջոցների հաշվեկշիռը մասնաճյուղի ընդհանուր ներհոսքերում:
- Նպաստում է ուսանողական վարկերի տրամադրման գործընթացին՝ ստեղծելով նախադրյալներ այդ ճանապարհով դեպի մասնաճյուղ ուղղվող ֆինանսական ներհոսքի ընդլայնման համար:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.Դ. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ուղղմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը**

Ֆինանսական ռեսուրսները ծախսվում են ըստ տրամադրման նպատակների: Միջոցները ծախսվում են մասնաճյուղի տնօրենի՝ ըստ համապատասխան ուղղությունների տրված հրամանների համապատասխան: Մասնաճյուղի տարեկան բյուջեն հաստատվում է մասնաճյուղի գիտական խորհրդում:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.Ե. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ**

Տեղեկատվության տարածումը ապահովվում է seu.a.am կայքի, ՀՊՃՀ «Պոլիտեխնիկ» պարբերականի և ՀՊՃՀ-ում գործող Mulberry էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով:

Ներմասնաճյուղային տեղեկատվության տարածումը և փաստաշրջանարությունը իրականացվում է էլեկտրոնային և ոչ էլեկտրոնային եղանակների զուգակցումով:



Մասնաճյուղի 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրով նախատեսվում է ինտեգրվել ՀՊՃՀ-ում ձևավորվող կառավարման միասնական տեղեկատվական համակարգին, խթանել ուսանող-դասախոս աշխատանքային փոխհարաբերություններում հաղորդակցման էլեկտրոնային ձևերի ներմուծումը և շարունակական զարգացումը, ներմասնաճյուղային կառավարման համակարգում զարգացնել տեղեկացման էլեկտրոնային ձևերի կիրառումը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.2. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին**

Մասնաճյուղը ստեղծում է անվտանգ և ապահով միջավայր: Մասնաճյուղում գործում է սննդի կետ, բուժ. կետ, մասնաշենքերի բոլոր հարկերը ապահովված են տարահանման պլաններով և կրակմարիչներով: Ուսանողները ծանոթանում են լաբորատորիաններում անվտանգության կանոններին:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 7.Է. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:**

Մասնաճյուղում առկա է բավարար քանակով համակարգիչներ (55 հատ), որի 69% ներգրավված է ուսումնական և 16.4% գիտահետազոտական գործընթացներում (հավելված 7.2):

Գրադարանային ֆոնդը ներկայումս կազմում 10407 կտոր գրականություն՝ 3073 դասագիրք, 3778 մեթոդական ցուցումներ, 588 ձեռնարկներ: Թեև գրադարանային ֆոնդը անընդհատ համալրվում է, սակայն առկա է նոր հայալեզու դասագրքերի պահանջարկ: Ներկա ռազմավարական ծրագրով նախատեսվում է շարունակել համակարգիչների և գրադարանային ռեսուրսների համալրումը:

SWOT վերլուծություն	
Ուժեղ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>• Վերանորոգված գլխավոր մասնաշենք</li> <li>• մասնաճյուղի մասնաշենքերի տեխնիկական վիճակի և շահագործման պայմանների շարունակական բարելավման միտում,</li> <li>• մասնաշենքերի հետ փոխկապակցված անհրաժեշտ շինությունների առկայություն,</li> <li>• մասնաճյուղի շենքերի հարակից տարածքների շարունակական բարելավում,</li> <li>• գազաֆիկացված ջեռուցում</li> <li>• Մասնաճյուղում սանիտարահիգիենիկ, կենսագործունեության անվտանգության և բնապահպանական պահպանում անհրաժեշտ մակարդակի վրա</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>• Լսարանային ֆոնդի բարելավման և ուսումնական գույքի արդիականացման միտում:</li> </ul>
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>• Համեմատաբար հնացած ուսումնական և լաբորատոր բազա, ոչ համաչափ ռեսուրսաապահովում լաբորատորիաների միջև</li> <li>• Գրադարանային ռեսուրսների անբավարար նորացում</li> <li>• Ներկայումս չշահագործվող և հիմնանորոգման ենթակա հանրակացարանի մասնաշենք</li> <li>• Շահագործվող, սակայն հիմնանորոգման ենթակա մարզադահլիճ և ուսումնական երկրորդ մասնաշենք</li> <li>• Հիմնանորոգման ենթակա մարզահրապարակ</li> </ul>
Հնարավորություններ	<ul style="list-style-type: none"> <li>• Անհրաժեշտ շենքեր և շինությունների առկայություն</li> <li>• 2012-2016թթ. ռազմավարական ծրագրով նախանշված ենթակառուցվածքների բարելավման և անհրաժեշտ մակարդակի ռեսուրսաապահովման պլաններ</li> </ul>
Վտանգներ	<ul style="list-style-type: none"> <li>• Պետական ոչ բավարար ֆինանսավորում</li> <li>• Սեփական համեստ ֆինանսական ռեսուրսներ</li> </ul>

### ՉԱՓԱՆԻՇ 8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

#### ՉԱՓՈՐՈՇԻՉ 8.Ա. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Մասնաճյուղն իր շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովում է սահմանված ձևաչափերով տարեկան հաշվետվությունների, ֆակուլտետների, բաժանմունքի, ամբիոնների և դասախոսական անձնակազմի տարեկան հաշվետվությունների, ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքների վերլուծության ձևերով:

Սյունիքի մարզի հասարակության կրթական պահանջունքների և աշխատաշուկայի առաջադրած պահանջների բավարարման նպատակով մասնաճյուղն իրականացրել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ և «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ մասնագետների վերապատրաստումներ, 2008/09, 2011/12 և 2012/13 ուստարիներին դիմորդների համար կազմակերպել անվճար խորհրդատվական ծառայություններ և նախապատրաստական դասընթացներ (հավելված 8.1.), իրականացրել լրացուցիչ մասնագիտական (երկրորդ բարձրագույն) կրթությամբ ուսուցում (աղյուսակ 8.1.):

#### Աղյուսակ 8.1.

Բակալավրի կրթական ծրագրով լրացուցիչ (երկրորդ մասնագիտությամբ) կրթությամբ ուսանողների թիվը և հաշվեկշիռը	2007/08	2008/09	2009/10	2010/11	2011/12
--	---------	---------	---------	---------	---------

Լրացուցիչ (երկրորդ մասնագիտությամբ) կրթությամբ ուսանողների թիվը	4	4	5	2	4
Հաշվեկշիռն ընդհանուր համակազմում, %	0.99	0.88	1.03	0.43	0.98
<i>Ըստ առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով մասնագիտությունների</i>					
Լրացուցիչ (երկրորդ մասնագիտությամբ) կրթությամբ ուսանողների թիվը	4	4	4		1
Հաշվեկշիռն առկա ուսուցմամբ ուսանողական համակազմում, %	0.99	0.95	1.01	0	0.46
<i>Ըստ հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով մասնագիտությունների</i>					
Լրացուցիչ (երկրորդ մասնագիտությամբ) կրթությամբ ուսանողների թիվը			1	2	3
Հաշվեկշիռն հեռակա ուսուցմամբ ուսանողական համակազմում, %			1.11	1.28	1.56

2012-2016թթ. ռազմավարական ծրագրով նախատեսվում է Սյունիքի մարզի հասարակության համար իրականացնել հետևյալ միջոցառումները. ընդունելության մասնագիտությունների (մասնագիտացումների) ցանկի ընդլայնում, տարածաշրջանի հանրակրթական և ավագ դպրոցներում հենակետային դասարանների ստեղծում, դիմորդների համար անվճար խորհրդատվական ծառայությունների և նախապատրաստական դասընթացների կազմակերպում, վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում, լրացուցիչ և շարունակական կրթության կազմակերպում:

Հաշվետվողականության միջոցով մասնաճյուղը վեր է հանում բացթողումները, բացահայտում թերի մնացած աշխատանքները, ամրագրում հաջողությունները և ձեռքբերումները, որը թույլ է տալիս բարելավել հաստատության կառավարումը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 8.Բ. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:**

Մասնաճյուղի գործունեությանն առնչվող բոլոր համահամալսարանական կանոնակարգերը և ընթացակարգային փաստաթղթերը տեղադրված են ՀՊՃՀ կայքում, իսկ մասնաճյուղի ներքին կարգապայության կանոնները տեղադրված է գլխավոր մասնաշենքի առաջին հարկում գտնվող հատուկ ցուցադրափեղքում: Ուսանողներին հասանելի են «Ուսանողի ուղեցույց»-ը և բակալավրական կրթական ծրագրով մասնաճյուղում իրականացվող ուսուցման վերաբերյալ ուղեցույցը՝ «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք»-ը:

Հասարակությանը հաշվետվողականությունն առավել թափանցիկ և մատչելի դարձնելու համար անհրաժեշտ է ունենալ էջ ՀՊՃՀ կայքում կամ էլ ստեղծել մասնաճյուղի կայքը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 8.9. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:**

ԶԼՄ-ների ներկայացուցիչները հաճախակի հրավիրվում են մասնաճյուղում իրականացվող միջոցառումներին, ինչպես նաև մասնաճյուղի ղեկավարությունը նրանց պարբերաբար տրամադրում է հարցազրույցներ, ներմասնաճյուղային կյանքն արտացոլվում է նաև «Պոլիտեխնիկ» և «Սյունաց երկիր» թերթերում:

Մասնաճյուղը համագործակցում է Սյունիքի մարզպետարանի, Կապանի քաղաքապետարանի, մարզի հանրակրթական դպրոցների, հասարակական կազմակերպությունների, գործընկեր և գործատու կազմակերպությունների հետ, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորումների հանձնաժողովներում ընդգրկված են համապատասխան ոլորտների պաշտոնատար և փորձառու մասնագետներ:

Ներկայիս ռազմավարական ծրարով նախատեսված է զարգացնել և բազմազան դարձնել հասարակության հետ մասնաճյուղի կապերը, ապահովել ակտիվ համագործակցություն ԶԼՄ-ների հետ, բազմազան դարձնել մասնաճյուղի վերաբերյալ տեղեկատվության տարածման ձևերը, միջոցները և շրջանակները, ինչպես նաև կազմակերպել մասնաճյուղի գործունեության վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն (հավելված 8.2.):

Մշակված ռազմավարական ծրագրով նշված միջոցառումների բարեհաջող իրականացումը թույլ կտա հասարակության հետ հետադարձ կապի մեխանիզմները դարձնել առավել արդյունավետ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 8.7. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:**

Մասնաճյուղի աշխատակիցների գիտական աշխատանքները պարբերաբար հրատարակվում են հանրապետական և միջազգային հանդեսներում, ինչպես նաև ԸՃԿ ֆակուլտետի կողմից հրատարակման ներկայացվող «Շրջանակ» գիտամեթոդական հոդվածների ժողովածուում: Մասնաճյուղում իրականացվում են գիտամեթոդական սեմինարներ, աշխատակիցները մասնակցում են ՀՊՃՀ-ի տարեկան գիտաժողովներին: Մասնաճյուղի կողմից իրականացվել են մասնագետների վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաև դիմորդների համար կազմակերպվում են նախապատրաստական դասընթացներ:

2012-2016թթ. ռազմավարական ծրագրով նախատեսված է իրականացնել հանրային կարիքներին ուղղված տարածաշրջանային (տեղական) ծրագրերում մասնաճյուղի առավելագույնս ներգրավում (հավելված 8.3.):

Մասնաճյուղի կողմից տրամադրվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է դրանք դարձնել մշտական, բազմազան և արդիական:

SWOT վերլուծություն	
Ուժեղ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>Սերտ համագործակցություն արդյունաբերական ձեռնարկությունների հետ, ուսումնական ծրագրերի և շրջանավարտների ծառայունակության վերաբերյալ</li> </ul>

	<p>հետադարձ կապի առկայություն,</p> <ul style="list-style-type: none"> <li>• Իրականացվող կրթական ծրագրերի շարունակական բարելավում,</li> <li>• Լեռնամետալուրգիական արդյունաբերության մասնագետների համար վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ անցկացնելու բավարար փորձ,</li> <li>• գիտական աշխատանքների հրատարակում հանրապետական և միջազգային հանդեսներում</li> </ul>
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>• Հասարակական պատասխանատվության քաղաքականության բացակայություն</li> <li>• Կատարված աշխատանքների արդյունավետության գնահատման մեխանիզմների բացակայություն</li> <li>• Գործընթացներին արտաքին շահակիցների մասնակցությունը համակարգող մեխանիզմների բացակայություն</li> </ul>
Հնարավորություններ	<ul style="list-style-type: none"> <li>• Ներգրավում տեղային և տարածաշրջանային հանրային ծրագրերում և ծառայություններում,</li> <li>• Ռազմավարական գործակցություն հիմնական գործատու կազմակերպությունների հետ՝ կրթական ծրագրերի արդիականացման և մասնաճյուղի շրջանավարտների ծառայունակության բարձրացման ուղղությամբ,</li> <li>• Գործարար և արտադրական գործակցային կապերի զարգացում Սյունիքի մարզի հիմնարկ ձեռնարկությունների հետ ,</li> <li>• Սյունիքի հանքարդյունաբերական և այլ ձեռնարկությունների տնտեսական աճի տեմպերի բարձրացման միտում, ճարտարագիտական կադրերի և մասնաճյուղի վճարովի ծառայությունների պահանջարկի աճ,</li> <li>• Կրթական բարեփոխումների իրականացում:</li> </ul>
Վտանգներ	<ul style="list-style-type: none"> <li>• Աշխատաշուկայի անկանխատեսելի վիճակ,</li> <li>• Հանրության պասիվություն:</li> </ul>

### ՉԱՓԱՆԻՇ-9 ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

**Արտաքին կապերի միջոցով Կապանի մասնաճյուղը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:**

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 9.ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:**

Մասնաճյուղի՝ փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող քաղաքականության ռազմավարությունն արտացոլված է ներկա ռազմավարական ծրագրում (հավելված 9.1), որը սերտորեն կապված է ՀՊՃՀ միջազգային գործունեության հետ:

Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող մասնաճյուղի ներկա քաղաքականությունը գլխավորապես պայմանավորված է ՀՊՃՀ քաղաքականությամբ: Անհրաժեշտ է, որ մասնաճյուղը փորձեր ձեռնարկի նշված ուղղություններով իր կապերի զարգացման և արդյունավետության բարձրացման համար:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 9.բ. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:**

Ներկայումս դեռևս մասնաճյուղը չունի համապատասխան ստորաբաժանում, և այժմ արտաքին կապերի ու միջազգայնացման ապահովման գործառույթները հիմնականում իրականացնում է մասնաճյուղի տնօրինությունը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 9.գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:**

2007-2011թթ. մասնաճյուղը ՀՊՃՀ միջազգային համագործակցության սահմաններում մասնակցել է միջազգային նախագծերի (TEMPUS-TACIS) և ունեցել է միջազգային կապեր ԱՄՆ Գլենդել քաղաքի քոլեջի հետ, շարունակվում է համագործակցությունը «Ջինիշյան հիշատակի» հիմնադրամի հետ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 9.դ. Մասնաճյուղն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:**

Մասնաճյուղում ուսումնառողների օտար լեզուների ուսուցումն իրականացվում է համաձայն ՀՊՃՀ հաստատած առարկայական ծրագրերի:

Մինչ այժմ աշխատակիցների համար օտար լեզուների դասընթացներ չեն կազմակերպվել:

SWOT վերլուծություն	
Ուժեղ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>• ՀՊՃՀ միջազգային կապերի առկայություն,</li> <li>• Միջազգային ծրագրերում մասնակցության փորձ:</li> </ul>
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>• Պաշտոնապես հաստատված միջազգայնացման քաղաքականության և ընթացակարգերի բացակայություն,</li> <li>• Օտար լեզվով դասավանդող դասախոսների պակաս,</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>• Աշխատակիցների համար օտար լեզուների դասընթացների բացակայություն,</li> <li>• Միջազգային ծրագրերում ներգրավված սակավաթիվ աշխատակիցներ:</li> </ul>
Հնարավորություններ	<ul style="list-style-type: none"> <li>• Արտաքին կապերի և միջազգայնացման ընդլայնումը Բոլոնիայի գործընթացի շրջանակներում:</li> </ul>
Վտանգներ	<ul style="list-style-type: none"> <li>• Երիտասարդ մասնագետ կադրերի արտահոսք</li> </ul>

## **ՉԱՓԱՆԻՇ 10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

**ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:**

### **ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.1. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր**

ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղը որակի ապահովման քաղաքականության հիմքերը դրել է իր առաջին ստրատեգիական պլանով 2007-2011թթ. (հավելված 10.1) և արդիականացրել է 2012-2016թթ. ստրատեգիական պլանով (հավելված 10.2): Հիմնական ռազմավարական ուղղություններն են՝

- ՀՊՃՀ-ում որակի մշակված համակարգի կիրառմամբ նախապատրաստել և իրականացնել մասնաճյուղի կրթական ծրագրերի վերլուծություն և որակի գնահատում՝ ապահովելով գործընթացների թափանցիկություն և արդյունքների հրապարակայնացում:
- Ելնելով ներքին գնահատման արդյունքներից՝ իրականացնել կրթական բարեփոխումներ:

Բարձրագույն կրթության որակի արժևորման Եվրոպական ընկերակցության (ENQA) չափանիշների հիման վրա ՀՊՃՀ-ում մշակված մեթոդաբանությամբ 2007/08 ուստարում իրականացվել է մասնաճյուղի գործունեության ինքնավերլուծություն (հավելված 10.3), կատարվել կրթության որակի մոնիթորինգ և պլանավորում: Ինքնավերլուծությունը իրականացվել է բազմացուցանիշային համակարգի հիման վրա, որը բաղկացած է 23 չափանիշներից.

Ինքնավերլուծության չափանիշներն են.

1. Ուսումնական պլանների համապատասխանությունը պետական ստանդարտներին
2. Պրոֆեսորների և դոցենտների տոկոսը ՊԴԱ-ի ընդհանուր կազմում
3. Դասավանդողների՝ պրոֆեսորների և դոցենտների միջին տարիքը
4. Դասավանդողների գիտական ակտիվությունը
5. Դասավանդողների մեթոդական ակտիվությունը
6. ՊԴԱ-ի որակավորման բարձրացումը
7. Ուսումնական գրականությամբ ապահովվածությունը
8. Ուսումնական էլեկտրոնային նյութերի առկայությունը

9. Ինտերնետին միացված համակարգիչների տոկոսը
10. Ուսումնական գործընթացում օգտագործվող համակարգիչների տոկոսը
11. Շենքային ապահովումը
12. Լաբորատորային սարքավորումներով ապահովումը
13. Ժամանակակից տեխնիկական սարքավորումներով լսարանների ապահովումը
14. Ուսումնական պրակտիկաների անցկացման կարգի համաձայնեցում ընդունված ստանդարտներին
15. Պրակտիկաների հաստատուն բազաների ապահովումը
16. Ճանաչված գիտական դպրոցի առկայությունը
17. Գիտական աշխատանքներում ներգրավված դասախոսների տոկոսը
18. Գիտական գրանտները
19. Պետ. բյուջետային ֆինասավորմամբ հետազոտման թեմաները
20. Ուսանողների միջին առաջադիմությունը
21. Ուսանողական գիտական հրատարակումները
22. Ուսանողների/ասպրանտների մասնակցությունը հետազոտական ծրագրերին
23. Գործատուների պահանջներին շրջանավարտների գիտելիքների և ունակությունների համապատասխանությունը:

Ինքնավերլուծության նպատակը հավատարմագրմանը նախապատրաստվելու նպատակով մասնաճյուղի գործունեության համակողմանի գնահատումն է: Միաժամանակ ինքնավերլուծությունը նպատակաուղղված է մասնաճյուղի ինքնազարգացման և կատարելագործման գործընթացի խթանմանը:

ՀՊՃՀ-ում և Կապանի մասնաճյուղում անց են կացվել նախապատրաստական սեմինարներ ինքնավերլուծության իրականացման մեթոդաբանության պարզաբանման վերաբերյալ:

Ստորև բերվում են ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղում իրականացված ինքնավերլուծության խնդիրները

- մասնաճյուղում մասնագետների պատրաստման փաստացի մակարդակի անաչառ վերլուծություն,
- մասնագետների պատրաստման պահանջվելիք մակարդակի համար անհրաժեշտ պայմանների քննախույզ և համակողմանի վերլուծությունը,
- մասնագետների պատրաստման որակի համադրումը նույն պրոֆիլի մասնագետների պատրաստման արտասահմանյան չափանիշների հետ,
- մասնաճյուղի զարգացման հեռանկարային ուղղությունների մշակման համար անհրաժեշտ տեղեկատվական նախադրյալների կուտակումը,
- մասնաճյուղի մասնագիտական ստորաբաժանումների աշխատանքի խթանումը և ընդհանուր և մասնագիտական բարձրագույն կրթության անհրաժեշտ մակարդակի պահպանումը:

Հետազոտության օբյեկտը ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղում ուսուցման որակի մակարդակի գնահատումն է, որը դիտարկվել է երկու տեսանկյունից. ուսուցման գործընթացի կազմակերպման և գիտելիքների փոխանցման ու վերահսկման: Յուրաքանչյուր մակարդակ բնութագրվում է ուսուցման որակի համապատասխան չափորոշիչներով: Ուսուցման գործընթացի կազմակերպումը ընդգրկում է այնպիսի հետևյալ չափորոշիչները՝



- նյութատեխնիկական բազայի ապահովում,
  - ուսումնական նյութերի և գրականության առկայություն
  - ուսումնա-օժանդակ կազմի աշխատանքի ճիշտ կազմակերպում
  - ինֆորմացիայի փոխանցման օպերատիվության բարձրացում:
- Գիտելիքների փոխանցման և վերահսկման գործընթացը բնութագրվում է
- լսարանում և գործնական պարապմունքների ժամանակ, ձեռք բերված գիտելիքներով,
  - արտալսարանային հանդիպումների կազմակերպման հաճախականությամբ (պարբերությամբ),
  - դասախոսի աշխատանքի որակի և գիտելիքների վերահսկմամբ:

Կապանի մասնաճյուղը ինքնավերլուծությունը իրականացրել է 2008թ.-ի մարտի 31-ի ռեկտորատի նիստում հաստատված պլան-ժամանակացույցի առաջին փուլով: Արդյունքները ներկայացվել և ամփոփվել են 2009թ. մայիսի 11-ի ռեկտորատի նիստում: Ինքնավերլուծությունը իրականացվել է Կապանի մասնաճյուղում ըստ նշված կարգի՝ հիմք ընդունելով ՀՊՃՀ-ում մշակված ուսումնական ստորաբաժանումների ինքնավերլուծության և գործունեության գնահատման հիմնական դրույթները, ինչպես նաև կիրառվել են այդ ոլորտում առկա մեթոդական ուղեցույցները և ինտերնետային հետազոտության միջոցով այլ բուհերի փորձի ուսումնասիրության արդյունքները:


ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի մասնագիտական խմբերում իրականացվել է անկետային հարցում՝ ուսանողի կողմից դասախոսի գործունեության որակի, դասընթացի և քննության կազմակերպման որակի, պետական մասնագիտական քննության և ավարտական աշխատանքի պաշտպանության որակի գնահատման նպատակով, ինչպես նաև փորձ է արվել պարզաբանել ուսանողների բավարարվածությունը մասնաճյուղի սպասարկումից, նրանց փոխհարաբերությունները վարչակազմի, դասախոսների և աշխատակիցների հետ: Վերլուծվել է նաև շրջանավարտների աշխատանքի անցնելու պատրաստվածության մակարդակի վերաբերյալ գործատուների ունեցած կարծիքը:

Օրինակ՝ ավարտական աշխատանքի պաշտպանության որակի գնահատմանը մասնակցել են բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսի 90 ուսանողներ:

Հ Հ	Հարցեր	գերազանց	շատ լավ	լավ	բավարկիմաժ	ստորաբավարկ
1	Ավարտական աշխատանքում տեսական և գործնական գիտելիքների կիրառման աստիճանը	49	14	20	5	2
2	Ավարտական աշխատանքում կուրսային նախագծերի և լաբորատոր աշխատանքների կիրառման աստիճանը	39	21	20	8	2
3	Տրամադրված տեխնիկական գրականության, լրացուցիչ նյութերի և ծրագրային փաթեթների օգտակարության աստիճանը	51	18	13	4	4
4	Ամբիոնի համակարգչային լսարանից օգտվելու	37	9	21	9	14

	հնարավորության աստիճանը					
5	Ավարտական աշխատանքի ղեկավարի կոնսուլտացիաների օգտակարության աստիճանը	53	10	21	3	3
6	Ավարտական աշխատանքների պաշտպանության կազմակերպական մակարդակը	51	16	14	5	4
7	Պաշտպանության ընթացքում տրված հարցերի համապատասխանությունը ավարտական աշխատանքում մշակված խնդիրներին	38	22	21	4	5
8	Պետական Քննական Հանձնաժողովի կողմից ավարտական աշխատանքի գնահատման արդարացիությունը	46	12	19	5	8
	Արդյունքում-%	50.6	16.9	20.7	6.0	5.8

Ավարտական Աշխատանքների Պաշտպանության որակի գնահատում



ՀՊՃՀ-ում որակի ապահովման ընթացակարգերի մշակումը սկզբնավորեց 2010թ. “Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ-Հայաստան” (այսուհետ՝ ԲՀԻՕՀՀ) կազմակերպության ֆինանսավորմամբ իրականացված “ՀՊՃՀ կրթական ծրագրերի որակի ապահովման ընթացակարգի մեթոդական հենքի մշակում՝ կիրառման օրինակներով” նախագիծով: Նախագծի շրջանակներում մշակվել և 2011թ. Մայիսի 31-ի ՀՊՃՀ Գիտական խորհրդի թիվ 75 որոշմամբ հաստատվել և գործողության մեջ է դրվել որակի ապահովման ընթացակարգային փաթեթը: Դրանով կանոնակարգվում է կրթական ծրագրերի որակի ապահովման գործընթացները, ինչը համահունչ է Որակի ապահովման Եվրոպական ասոցիացիայի (ENQA) ստանդարտներին և ուղենիշներին: Կրթական ծրագրերի որակի ապահովման գործընթացների իրականացման մասնաճյուղի ռազմավարության ուղղություններն են

- Մասնաճյուղում ապահովել փուլային անցում ՀՊՃՀ-ում «թյունինգյան» մեթոդաբանությամբ մշակվող նոր կրթական ծրագրերի:
- Էապես բարելավել շրջանավարտների գործնական պատրաստականության մակարդակը՝ առավել արդյունավետ օգտագործելով արտադրական և նախաավարտական պրակտիկաների ընձեռնած հնարավորությունները:
- Ծրագրային վերակառուցման և փորձաքննության գործընթացներում ներգրավել հիմնական գործատու կազմակերպությունների ներկայացուցիչներին:

- Իրականացնել մասնաճյուղի կրթական ծրագրերից և շրջանավարտներից գործատուների բավարարվածության վերաբերյալ պարբերական ուսումնասիրություններ:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:**

ՀՊՃՀ-ն կարևորելով Որակի ներքին ապահովման գործընթացները ելնելով իր հնարավորությունները և մասամբ օգտագործելով տարբեր հիմնադրամներից ստացվող օժանդակությունները, տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ կառավարման համար:

2006թ. հուլիսի 7-ի ԳԽ թիվ 89 որոշմամբ ստեղծվել է կրթության որակի վերահսկման և կառավարման բաժինը՝ ուսումնամեթոդական վարչության կազմում: Ի կատարումն ՀՊՃՀ-ի Գիտական խորհրդի 2011թ դեկտեմբերի 01-ի նիստի թիվ 24 որոշման պահանջի 2012թ.հունվարի 01-ից ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղում ստեղծվել է կրթության որակի ապահովման և վերահսկման բաժին՝երեք հաստիքով:

Ներկայումս ՀՊՃՀ-ում և Կապանի մասնաճյուղում գործում է որակի ապահովման ներքին համակարգի ադմինիստրատիվ կազմակերպական կառուցվածք՝ որակի կառավարման մասնագիտացված բաժիններով (ԿՈՎԱԿ բաժինները), ֆակուլտետային հանձնաժողովային միավորներով ու կառավարման հոսքերով: ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի ֆակուլտետներում ձևավորվել են կրթության որակի ապահովման հանձնաժողովներ: Կրթության որակի ապահովման ֆակուլտետային մշտական հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է ֆակուլտետի դեկանը, դրանցում ընդգրկված են 5-ական անդամ յուրաքանչյուր ֆակուլտետային խորհրդից: Կրթության որակի ապահովման ֆակուլտետային մշտական հանձնաժողովի անդամները իրենց գործունեությունը իրականացնում են հասարակական կարգով:

Կապանի մասնաճյուղի ԿՈԱ և Վ բաժինը ունի իր պաշտոնապես հաստատված գործառույթներն /հավելված 10.4/ ու հաստիքները:

TEMPUS-ի շրջանակներում մասնաճյուղում իրականացվել է Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսների ֆինանսավորումը: Որակի ապահովման ներքին համակարգի ռեսուրսների կառավարման և շարունակական լավարկման նպատակով 2012թ. ապրիլին մասնաճյուղում բարելավվեց կառույցի տեխնիկական ապահովվածության վիճակը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.3. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:**

ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի որակի ապահովման ռազմավարությունը և քաղաքականությունն ամրագրված են ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի 2012-2016 ՌԾ-ում և հաստատված են Համալսարանի կառավարման խորհրդի կողմից, անցել են

քննարկման բոլոր փուլերը, (ամբիոն, ուսանողական խորհուրդ, ֆակուլտետ, մասնաճյուղի գործընկեր կազմակերպություններ, տնօրինություն):

Որակի ապահովմանը առընչվող բոլոր ընթացակարգերը պաշտոնապես հաստատված է ՀՊՃՀ գիտխորհրդի կողմից համաձայն դրանց հաստատման գործող մեխանիզմների: Ու գործառույթներում մասնաճյուղը կարևորում է ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը, ինչը կանոնակարգված է և հաստատված ՀՊՃՀ ԳԽ-ի կողմից: Շահակիցների մասնակցությունը ներառում է հետևյալ ոլորտները՝

- կառավարման և վարչական գործընթացներում
- ուսումնական գործընթացներում
- հետազոտական գործընթացներում
- սոցիալական գործընթացներում:

ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի գիտական խորհրդի և ֆակուլտետի խորհրդի անդամների համամասնությունը կանոնակարգված է ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի կանոնադրությամբ: Այն ներկայացված է հետևյալ համամասնությամբ.

Գիտխորհուրդ՝

- վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ՝ 75%
- ուսանողության կողմից՝ 25 %:

Ֆակուլտետի խորհուրդ՝

- պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ՝ 75%
- ուսանողական համակազմի ներկայացուցիչ՝ 25 %:

Ուսանողները, որպես ներքին շահակիցներ.

- ընդգրկված են ուսման որակի գնահատման գործընթացներում՝ մասնակցելով ուսանողական հարցումներին և ստացած կրթությունից ուսանողների բավարարվածության գնահատման հարցումներին, ընդգրկված են ֆակուլտետային խորհրդի կազմում, ՀՊՃՀ գիտական խորհրդում և նրա որակի ապահովման հանձնաժողովում,
- մասնակցում են Համալսարանի որակի ապահովման գործընթացներին՝ որպես ուսանողական ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ) ներկայացուցիչներ,
- համաձայն սահմանված ընթացակարգի՝ մասնակցում են ստորաբաժանման ինքնավերլուծության գործընթացին:

Ուսանողները ակտիվ մասնակցություն են ունենում որակի ապահովման գործընթացներում: Կապանի մասնաճյուղում ուսանողի կողմից պարբերաբար իրականացվում է դասախոսների մասնագիտական և մանկավարժական կարողությունների գնահատման հարցում՝ «Դասախոսը ուսանողի աչքերով», որը օգտագործվում է դասախոսների ատեստավորման և մրցույթների ժամանակ (հավելված 10.5): Դրանով կարևորվում է ուսանողի դերը վերոնշյալ Ու գործառույթներում: Հարցման տվյալները վերլուծվում է ԿՈԱԿՎ բաժնում և արդյունքները ներկայացվում է մասնաճյուղի տնօրինությանը: Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում ավարտական կուրսերում ԿՈԱԿՎ իրականացնում է ստացած կրթությունից ուսանողների բավարարվածության հարցում: Ուսանողների հարցման արդյունքներով վեր են հանվում բազմաբնույթ հիմնախնդիրներ՝

պրոֆեսորադասախոսական կազմի որակի, ուսումնական գործընթացի կազմակերպման, առանձին մոդուլներից բավարարվածության: Հարցման ընթացքում ուսանողներին հնարավորություն է տրվում ազատ շարադրել իրենց կարծիքները, մեկնաբանությունները, առաջարկությունները: Հարցման արդյունքները ներկայացվում են մասնաճյուղի տնօրինության դիտարկմանը, քննարկվում են ֆակուլտետային խորհրդի և ամբիոնների նիստերին:

Արտաքին շահակիցները պարբերաբար մասնակցում են շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումներին և ավարտական աշխատանքների պաշտպանություններին: Ամփոփիչ ատեստավորումների և ավարտական աշխատանքների պաշտպանությունների հանձնաժողովների համամասնությունը կազմում է ոչ պակաս՝ քան 50 %, ներառյալ նախագահը և փոխնախագահ: Քննության ավարտից հետո հանձնաժողովի նախագահը ներկայացնում է կարծիք՝ «Քննական հանձնաժողովի նախագահի կարծիք», որը քննարկվում է ամբիոնի և ֆակուլտետի խորհրդի նիստերում:

Արտաքին շահակիցների (փորձագետները, շրջանավարտները, գործատուները) դերը և կարծիքը որոշիչ է

- կրթական ծրագրերի արտաքին փորձաքննությունում,
- շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում,
- կրթական ծրագրերից և գործատուների պահանջներին շրջանավարտների գիտելիքների և ունակությունների բավարարվածության հարցումներում:
- Արտաքին շահակիցների դերը կարևորվում է նաև նրանց մասնակցությամբ զանազան հասարակական/մասնագիտական կազմակերպություններում: Մասնաճյուղը Համալսարանի կազմում համագործակցում է ԵրՊԻ-ՀՊՃՀ Շրջանավարտների ասոցիացիայի և «Պոլիտեխնիկ» հիմնադրամի, «Դ-Տելեկոմ» ՓԲԸ, «Օրանժ Արմենիա» ՓԲԸ, Սյունիքի մարզպետարանի, Կապանի քաղաքապետարանի, մարզի հանրակրթական դպրոցների հետ: հետ: Գործընկերները օգնում են նաև սարքավորումներով ապահովման և լաբորատորիաների բարելավման պրոցեսում: Օրինակ: <<ՀՊՄԿ>> ՓԲԸ-ի ֆինանսական աջակցությամբ հիմնովին վերանորոգվել է մասնաճյուղի գլխավոր մասնաշենքը և կահավորվել է մեկ համակարգչային լաբորատորիա: Գործընկերային կապերի ամրապնդման և մասնաճյուղի զարգացման ծրագրերում շրջանավարտների, նվիրատու և հովանավոր կազմակերպությունների ու անհատների ներդրումների իրականացման ուղղությամբ աշխատանքները ամրագրված են 2012-16թթ ՌԾ-ի Նպատակ 8-ում:

#### **ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.4. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:**

Սկսած 2009թ. ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղը պարբերաբար մասնակցում է ՀՀ ՈԱԱԿ հիմնադրամի կողմից իրականացվող տարաբնույթ գործընթացներին, մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրման օն-լայն գործընթացի շրջանակներում կազմակերպված միջոցառումներին և սեմինարներին: Մասնաճյուղում 2012թ. հունվարի 1-ից ստեղծվել է կրթության որակի ապահովման և վերահսկման բաժին, որն ընդգրկված է ՀՊՃՀ ԿՈՎԱԿ բաժնում: Բաժնի

նպատակներն ու խնդիրները պայմանավորված են մասնաճյուղի զարգացման ստրատեգիական նպատակներով և խնդիրներով: ԿՈԱԿ բաժնի նպատակն է նպաստել մասնաճյուղի որակի ներքին ապահովման համակարգի ներդրմանը՝ նպատակաուղղելով դրանք մասնաճյուղի կրթության որակի բարձրացմանը և արտաքին ու ներքին շահակիցների պահանջների բավարարմանը: Մասնաճյուղում որակի ապահովման ներքին համակարգը իր առաջին քայլերն է անում արտաքին որակի ապահովման՝ ինստիտուցիոնալ և ծրագրային հավտարմագրման գործընթացներում: Որակի ապահովման գործընթացներն այսուհետ կրելու են շարունակական բարելավման և հետևողական վերահսկման բնույթ՝ հիմնվելով Դեմինգի հայտնի ՊԻՍԲ ցիկլի վրա:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:**

Որակի ապահովման արտաքին գործընթացների՝ հավատարմագրման և/կամ արտաքին գնահատման ժամանակ մասնաճյուղը հիմնվում է իր գործունեության արդյունավետության վերլուծության արդյունքների վրա, որոնց ցուցանիշները ներկայացվում են ըստ գործունեության հետևյալ բնագավառների՝ ընդունելություն և ուսանողական համակազմ, ուսումնական գործընթաց, ռեսուրսներ և կառավարում, ենթակառուցվածքներ (նյութատեխնիկական բազա), ֆինանսներ, գիտահետազոտական գործունեություն, տեղեկատվական ռեսուրսներ, արտաքին կապեր և միջազգային համագործակցություն (հավելված 10.6): Մասնաճյուղը, հիմք ընդունելով կրթության որակի նկատմամբ պետական վերահսկողության միասնական քաղաքականությունը, իր 2012-2016թթ. ռազմավարական ծրագրում հաշվի է առել Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՄԿՈԱԿ) կողմից սահմանված ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների/չափորոշիչների պահանջները, որոնք ձևակերպված են մասնաճյուղի զարգացման ռազմավարական ուղղություններում, նպատակներում և խնդիրներում: Վերջինները ներկայացված են կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերում:

Մասնաճյուղում ընթացող որակի գնահատման/ապահովման բոլոր գործընթացների լիարժեք իրականացման համար ԿՈԱ և Վ բաժինը հավաքում, ներմուծում և մշակում է անհրաժեշտ տվյալներ:

Որակի ապահովման արտաքին գնահատման գործառույթները առաջադրված են նաև մասնաճյուղի 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի 2-րդ նպատակի 5-րդ խնդրում:

Նախապատրաստվել ՄԿՈԱԿ-ի կողմից մասնաճյուղի կրթական ծրագրերի արտաքին փորձաքննական գնահատման և հավատարմագրման փուլային գործընթացին, որի ռազմավարության հիմնական ուղղություններն են.

- ՀՊՃՀ-ում համալսարանի գործունեության կրթական ոլորտների ինքնագնահատման առկա չափանիշների լրամշակումից հետո այն ներդնել մասնաճյուղում;
- իրականացնել մասնաճյուղի գործունեության նախկինում իրականացված ինքնավերլուծության արդյունքում մշակված բարելավող միջոցառումների

պլանի և կողմնորոշիչ ցուցանիշների կատարողականների համադրական վերլուծություն և գնահատել արդյունքները ՄԿՈԱԱԿ-ի սահմանած չափանիշների տեսանկյունից;

- իրականացնել մասնաճյուղի գործունեության ինքնավերլուծություն՝ համապատասխան գեկույցի հրապարակմամբ: Նախապատրաստել մասնաճյուղը ՄԿՈԱԱԿ-ի կողմից կրթական ծրագրերի արտաքին փորձաքննական գնահատման և հավատարմագրման փուլային գործընթացներին;
- իրականացված արտաքին գնահատման արդյունքների վերլուծության հիման վրա նախաձեռնել անհրաժեշտ կրթական բարեփոխումներ;
- մասնաճյուղի ներքին ու արտաքին շահակիցների համար ապահովել ուսուցման որակի գնահատման և կրթական ծրագրերի հավատարմագրման չափանիշների ու գործընթացների թափանցիկությունը, ինչպես նաև ուսանողներին և գործատուներին ներգրավել որակի գնահատման գործընթացում:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ 10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:**

Մասնաճյուղի գործունեությունը պարբերաբար ներկայացվում է հնարավոր բոլոր ներքին և արտաքին միջոցներով, ուսանողների ու դասախոսական կազմի հետ կազմակերպվող տարբեր հանդիպումներով, հրապարակային քննարկումներով ու մտքերի փոխանակումներով, ՁԼՄ-ներով և այլն: ՁԼՄ-ների ներկայացուցիչները հաճախակի հրավիրվում են մասնաճյուղում իրականացվող միջոցառումներին, մասնաճյուղի ղեկավարությունը նրանց պարբերաբար տրամադրում է հարցազրույցներ, ներմասնաճյուղային կյանքն արտացոլվում է նաև «Պոլիտեխնիկ» և «Սյունաց երկիր» թերթերում:

Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ հանրության տրամադրվող տեղեկատվությունը պարբերաբար հրապարակվում է տարբեր միջոցներով՝ օրինակ.

- ՀՊՃՀ դիմորդի ուղեցույցը, որը ներառում է նաև ամփոփ տեղեկատվություն մասնաճյուղի ընդունելության պայմանների ու կանոնների, առաջարկվող մասնագիտությունների, ըստ ուսուցման ձևերի ընդունելության պլանային տեղերի վերաբերյալ
- մասնաճյուղի 2012-2013 ուստարվա ընդունելության գովազդային բուկլետը, որը պարունակում է ինֆորմացիա մասնաճյուղի, և այս տարվա ընդունելության պլանով նախատեսված մասնագիտությունների մասին
- ուսանողի ուղեցույցը, ուսանողի իրավունքն ու պարտականությունները
- կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցները և դասընթացների տեղեկագրքերը բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողների համար, որոնք պարունակում են ուսանողների ուսումնառության համար անհրաժեշտ տեղեկատվությունը՝ մասնավորապես կրեդիտային համակարգի հիմնադրույթների, ուսումնական գործընթացի կամակերպման և գիտելիքների

ստուգման ու գնահատման կարգի, առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքի, բովանդակության և աշխատածավալների, ծրագրի բաղկացուցիչ դասընթացների և դրանցով նախանշված կրթական արդյունքների, բովանդակության ու աշխատաժամանակի (կրեդիտների) վերաբերյալ:

Սյունիքի մարզի հասարակության կրթական պահանջունքների և աշխատաշուկայի առաջադրած պահանջների բավարարման նպատակով մասնաճյուղն իրականացրել է «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ և «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ մասնագետների վերապատրաստումներ, դիմորդների համար կազմակերպել անվճար խորհրդատվական ծառայություններ և նախապատրաստական դասընթացներ, իրականացրել լրացուցիչ (երկրորդ բարձրագույն կրթությամբ ուսուցում) կրթությամբ ուսուցում: 2012-2016թթ. ռազմավարական ծրագրով նախատեսվում է Սյունիքի մարզի հասարակության համար իրականացնել հետևյալ միջոցառումները. ընդունելության մասնագիտությունների (մասնագիտացումների) ցանկի ընդլայնում, տարածաշրջանի հանրակրթական և ավագ դպրոցներում հենակետային դասարանների ստեղծում, դիմորդների համար անվճար խորհրդատվական ծառայությունների և նախապատրաստական դասընթացների կազմակերպում, վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպում, [լրացուցիչ և շարունակական կրթության կազմակերպում:](#)

### 10-րդ չափանիշի SWOT-վերլուծություն

SWOT վերլուծություն	
Ուժեղ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>• Որակի ապահովման նպատակների եւ խնդիրների ձեւակերպումը ստրատեգիական պլանում:</li> <li>• Սերտ համագործակցություն ՀՊՃՀ ԿՈՎԱ Կ բաժնի հետ:</li> <li>• Որակի ներքին ապահովման վերաբերյալ ամրագրված սկզբունքների առկայությունը՝ համահունչ ENQA-ի պահանջներին:</li> <li>• Համալսարանի և մասնաճյուղի ղեկավարության աջակցությունը որակի ներքին ապահովման մշակման եւ իրականացման գործում:</li> <li>• Որակի ապահովման առանձին մեխանիզմների եւ ընթացակարգերի առկայությունը:</li> <li>• Բանիմաց աշխատակիցների ներգրավվածություն որակի ներքին ապահովման գործընթացներում:</li> <li>• ՈԱ ևՎ բաժնի հագեցվածություն ժամանակակից տեխնիկայով և աշխատանքային բարենպաստ պայմաններ:</li> </ul>
Թույլ կողմեր	<ul style="list-style-type: none"> <li>• Որակի ապահովման համար պատասխանատու աշխատակազմի փորձի բացակայություն:</li> <li>• Որակի ապահովման առանձին բաղադրիչների</li> </ul>



	գնահատման և մոնիթորինգի փորձի բացակայություն:
Հնարավորություններ	<ul style="list-style-type: none"> <li>• Հեռակապի ժամանակակից տեխնիկական միջոցների օգնությամբ ՀՊՃՀ-ի համապատասխան բաժնի հետ հաղորդակցման և օն-լայն մոնիթորինգի կազմակերպում:</li> <li>• Պարբերաբար մասնակցություն ՀՊՃՀ ԿՈՎԱԿ բաժնի և ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող սեմինարներին և համապատասխան աշխատանքների փորձի ձեռք բերում:</li> </ul>
Վտանգներ	<ul style="list-style-type: none"> <li>• Ենթակառուցվածքային հավատարմագրման իրականացման փորձի բացակայություն:</li> </ul>